



**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ**

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄՔՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ



Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ող-
ջումում եւ հայրապետական Մեր օրի-
նությունն ենք բերում ձեզ տարեմուտի
այս երեկո:

Նոր տարվա սեմին ենք վերստին.
հուսառատ հոգով պատրաստվում ենք
դիմավորելու փրկչական 2013 թվակա-
նը, նաեւ վերհիշում ենք մեր ապրածը,
մեր ձեռքբերումներն ու կորուստները
անցնող տարում:

Գոհություն եւ փառք Աստծուն՝ ապ-
րեցինք խաղաղության մեջ, ջանքեր
գործադրեցինք հոգեւոր եւ ազգային
մեր կյանքի զորացման, մեր ժողովրդի
բարօրության եւ առաջընթացի համար,
ջանացինք հաղթահարել մեր առջեւ
ծառացող խնդիրները: Ունեցանք եւ
հաջողություններ, եւ դժվարություն-
ներ: Տագնապեցինք Մերձավոր Արե-
ւելքում ապրող մեր ժողովրդի զավակ-
ների համար, որ շարունակում են կրել
պատերազմական իրավիճակի նեղու-
թյունները:

Տարեմուտի այս երեկո, երբ մեր ա-
վարտուն եւ անավարտ գործերով,
ձեռքբերումներով, հոգսերով ու խնդի-
րներով պատմությանն ենք հանձնում
անցնող տարին, աղոթքն ու մաղթանքն
է Հայրապետիս հոգում, որ նոր՝ 2013
թվականը լինի խաղաղաբեր ու բարե-
բեր աշխարհի եւ մեր ժողովրդի համար,
եւ հավատավոր Մեր զավակները Հայ-
րենիքում եւ Սփյուռքում ապրեն ու գոր-
ծեն ազգասեր ու հայրենասեր ոգով, առ
Աստված անասան հավատքով, որ-
պեսզի Տիրոջ գորակցությամբ իրակա-
նություն դարձնենք ազգային վերա-
գարծնի մեր հույսերն ու տեսիլքները:

Եկող նոր տարին մեր կյանքում ա-
ռանձնանում է նախագահական ընտ-
րություններով, որը մեր բարօր, արդար
ու ծաղկուն կյանքի հավատով պիտի
դարձնենք բարի հանգրվան մեր երկրի
կայուն առաջընթացի ու զարգացման,
մեր հզոր Հայրենիքի կերտման ճանա-
պարհին: Բոլոր դժվարություններով ու
խնդիրներով հանդերձ՝ այսօր ավելի
մոտ ենք տեսնում այդ լուսավոր օրը, ո-
րը մեր ջանք ու աշխատանքով պիտի
կյանքի կոչենք, յուրաքանչյուրս մեր
տեղում՝ որպես ճշմարիտ հավատա-
ցյալներ, որպես արժանավոր քաղա-
քացիներ եւ ազնիվ զավակներ մեր
երկրի: Այս հուսաբեր ժամանակում
չունենք նահանջի իրավունք: Դեռ
պետք է առավել զորացնենք ու ամ-
րագրենք Արցախի անկախությունը,
հասնենք համընդհանուր ճանաչմանը
Հայոց Տեղապալանության, որի 100-ա-
մյա տարելիցի ոգեկոչումը ուժ եւ ան-
բեկանելի գործություն պիտի հաղորդի
մեր ազգային միասնականությանը՝
շարունակելու մեր ջանքերը հանուն
արդարության եւ մեր իրավունքների
պաշտպանության:

Այս պահին, երբ բոլորս համակ-
ված ենք նույն զգացումներով, նույ-
նացած ենք մեր լավատեսությամբ,
հայրենյաց սիրով, ազգային հույսե-
րով, մեր մաղթանքներով ու աղոթքնե-
րով, հաստատուն պահենք մեր կամ-
քը՝ ազգանպաստ ու հայրենամեկ
գործերով կերտելու լուսավոր նոր օրը
մեր ազգի, շենացնելու երկիր հայրե-
նին, հավելելու պայծառությունը մեր
Սուրբ Եկեղեցու:

Բարի սպասումներով լի տարեմու-
տի այս պահին մեր աղոթքներում հի-
շենք Սիրիայում ապրող մեր ժողովրդի
զավակներին, բոլոր նեղյալներին ու
կարոտյալներին, աղոթենք հեռվում
գտնվող մեր մերձավորների, 2012 թվա-
կանին ի Տերը նմշածների համար: Ա-
ղոթք բարձրացնենք Հայրենիքի սահ-
մանները հսկող մեր բանակի եւ բոլոր
նրանց համար, ովքեր իրենց ծառայա-
կան դիրքերում են դիմավորում Նոր
տարին:

Թող Աստված Իր օրհնության ներքո
պահպանի ամենքիս, սիրելիներ, պար-
գեւելով խաղաղ ու բարի օրեր, հայրե-
նաշեն ու ազգամեկը ջանքերի արդյու-
նավորում, առաջընթաց ու բարգավա-
ճում: Թող 2013 թվականը լինի հոգեւոր
արգասավորության, բարիքով առատ,
ձեռքբերումներով եւ ուրախությամբ լե-
ցուն տարի: Շնորհավոր Նոր տարի:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՊԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆԵԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Հունվարի 6-ին Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին նշեց մեր Տեր եւ Փրկիչ
Հիսուս Զրիստոսի Սբ Ծննդյան եւ Աստվածայանության տոնը: Համայն հայության
հոգեւոր կենտրոնում՝ Միածնաէջ Մայր տաճարում, սուրբ Պատարագ մատուցեց Ն. Ս.
Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Տաճարի զանգերի ավետաբեր դողանքների ներքո հայրապետական շքեղ թափո-
րը Վեհարանից Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Հայաստանի Հանրապետության
Նախագահ Սերժ Սարգսյանին ամպիովանիով առաջնորդեց Մայր տաճար: Ամպիո-
վանակիրներն էին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի գլխավոր խմբագիր
Տիգրան Ֆարմանյանը, արվեստագետ-երգահան Վահան Արծրունին, Ս. Փարաշանո-
վի տուն-թանգարանի տնօրեն Չավեն Սարգսյանը եւ ԳԱԱ փիլիսոփայության եւ սո-
ցիոլոգիայի ինստիտուտի տնօրեն Գեւորգ Պողոսյանը: Առընթերակներն էին Մայր
Աթոռի լուսարարապետ Հովհան Եպս Հակոբյանը եւ Մայր Աթոռի վարչատնտեսական
բաժնի տնօրեն Մուշեղ Եպս Բաբայանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը տոնի առիթով հայրապետական իր պատգամն ուղ-
ղեց աշխարհասփյուռ համայն հայությանը՝ ամենքին փոխանցելով հրեշտակաբար-
բառ ավետիսը:

Ս. Պատարագի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց ջրօրհները, ո-
րի խաչի կնքահայրն էր ակադեմիկոս Սեն Արեւշատյանը:

Պատարագի արարողությանը ներկա էին ՀՀ Ազգային Ժողովի Նախագահ Հո-
վիկ Աբրահամյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Գերագույն հոգեւոր խոր-
հրդի անդամներ, կառավարության անդամներ, պետական բարձրաստիճան պաշ-
տոնյաներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ,
կրթության, գիտության եւ մշակույթի ներկայացուցիչներ:

«**Ա**հա կոյսն յղասցի եւ ծնցի որդի, եւ
կոչեսցեն զանուն Նորա Էմմանուէլ, որ
թարգմանի՝ «ընդ մեզ Աստուած»
(Մատթ. Ա 23, Եսայի Է 14)

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ,
Հոգու անհուն ուրախությամբ այսօր
օրհնաբանում եւ փառաբանում ենք մեր
Տեր եւ Փրկիչ Հիսուս Զրիստոսի Սբ Ծնունդն
ու Աստվածայանությունը՝ միմյանց փո-
խանցելով ողջույնը. «Զրիստոս ծնաւ եւ
յայտնեցաւ, ձեզ եւ մեզ մեծ աւետիս»:
Ի լրումն ժամանակի իրականացավ Եսա-

յի մարգարեի խոսքը, թե՛ «Ահա կոյսը պիտի
յղիանայ եւ մի որդի պիտի ծնի, եւ Նրան պի-
տի կոչեն Էմմանուէլ, որ նշանակում է Աս-
տուած մեզ հետ»:

Երկնքի անհասանելի բարձունքներից
մարդասեր Տերը խոնարհվեց եւ որպես մա-
նուկ ծնվելով քարայրում՝ աղքատացրեց Ի-
րեն, որպեսզի մեզ հարստացնի հոգեւոր
բարիքներով: Պողոս առաքյալն ասում է.
«Գիտե՛ք շնորհները մեր Տեր Յիսուս Զրիս-
տոսի, որ ձեզ համար աղքատացաւ, Նա, որ
հարուստ էր, որպեսզի դուք Նրա աղքատու-
թեամբ հարստանաք» (Բ Կորնթ. Ը 9):

Շարունակությունը՝ էջ 2





Սկիզբը՝ էջ 1

Աստված մարդացավ, որպեսզի Աստծո պատկերով ստեղծված մարդը ճանաչի իր Արարչին, Նրա կամքը, հարստանա հավատքով, Աստծո խոսքով, հարստանա աստվածահաճո կյանքի փափագով ու փութաշնչությամբ եւ փրկության արժանացած՝ ժառանգի հավիտենական կյանքը: Արդարեւ, ոչինչ չի կարող համեմատվել այդ հարստության՝ Աստծո արքայության մեջ հավիտենական կյանք ունենալու շնորհի

րով վերածնված մարդը վերափոխում է կյանքը՝ այն առաջնորդելով միշտ դեպի բարին, ավելի լավ ու կատարյալը: Տիրոջ ներկայության եւ Նրա ողորմության անստվեր շողերի առջեւ, ինչպես ասում է սբ Գրիգոր Նարեկացին, հալչում են մեղքերը, ողջանում են վերքերը, վերանում են ապականությունները, նահանջում են տխրություններն ու հեծությունները, փախչում է խավարը, եւ տիրում է ամենախնամ թագավորությունը Բարերար Աստծո (Մատեան ողբերգ. Բան

մարդկանց հոգում չկա Աստված, նյութականը միայն բաժանում է մարդկանց, ցամաքեցնում կյանքի ուրախությունն ու երջանկությունը: Ունենորն ապրում է անհանգստության մեջ, չունենորը՝ նեղսրտության, ընդհանուր հասարակությունը՝ օտարացման: Հանուն նյութականի են մարդիկ հնարներ փնտրում կողոպտելու, զրկելու, նվաաստացնելու: Հանուն նյութականի են օրենքներ խախտում, պաշտոն չարաշահում, իրավունք ոտնահարում, միմյանց կործանում: Հանուն նյութականի, ավաղ, երբեմն նաեւ՝ Աստծո անունով՝ ընդդեմ Աստծո: Այն, ինչ ծնունդ է առնում հանուն Աստծո, բարիք է մարդկանց համար, մխիթարություն ու խնդություն: Աստծո հետ մարդու համար գործում են կյանքի այլ չափանիշներ, գոյության իմաստի այլ սկզբունքներ ու արժեքներ՝ «սեր՝ առանց կեղծիքի. ատելով չարը՝ ընթանալ բարու յետեւից. եղբայրասիրութեան մեջ՝ միմեանց հանդեպ լինել գթասիրտ. պատիւ տալու մեջ՝ միմեանց գերազանցել» (Հռոմ. ԺԲ 9-10): Աստծո հետ պաշ-



թոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Մեսրոպ Արք. Մութաֆյանին, Երուսաղեմի Հայոց Պատրիարքական Տեղապահ Գերաշնորհ Արիսարք. Շիրվանյանին, քույր Եկեղեցիների հոգեւոր պետերին եւ մեր Եկեղեցու ողջ հոգեւոր դասին եւ հայցում Տիրոջ բյուր շնորհներն ու զորակցությունը քրիստոսապատվեր առաքելության մեջ:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ



հետ, որ բերեց մեզ Փրկիչ մեր Տերը՝ Հիսուս Զրիստոսը՝ «մարդու Որդին, որ երկնքի էր» (Յովհ. Գ 13):

Փառքի ու գործունեության անմեղմեղալի Տերը մանկացել, աշխարհ է եկել, եւ յուրաքանչյուրը կարող է համարձակաբար մոտենալ ու երկրպագել Նրան՝ հովիվների ու մոզերի օրինակով, ովքեր ճանաչեցին Նրան եւ իրենց ընծաները բերեցին քարայրում մսուրի մեջ դրված Փրկիչ մանկանը:

Այսօր, սիրելի՛ հավատավոր ժողովուրդ, մենք ենք երկրպագում մանուկ Հիսուսի սնարի առջեւ, բայց ի՞նչ ընծաներ ունենք, որ մատուցենք մեր նորածին Փրկչին: Նյութական հարուստ պարգեւներ չէ, որ սպասում է Տերը: Պատվական պարգեւը Փրկչի համար քրիստոնյան ինքն է, ով մաքուր սրտով ընդունել է «Աստված մեզ հետ է» մարգարեաբարբառ ավետիսը եւ ջանում է կյանքի ամեն մի օրն ապրել աստվածային կամքի համաձայն, լի առ Աստված հավատքով, այլոց հանդեպ սիրով, Փրկչի հետ հոգեւոր նորոգությամբ: Փրկչի շնորհներ-

սկա): Այսօր եւ մինչեւ ժամանակների վախճանը, իր խոստման համաձայն, մարդացյալ Աստված մեզ հետ է (Մատթ. ԻԸ 20). մեզ հետ է փրկության իր շնորհով, իր սքանչելագործ մարդասիրությամբ: Բայց արդյո՞ք մենք Աստծո հետ ենք, եւ արդյո՞ք աշխարհն ընթանում է այն ճանապարհով, որ ուղենշեց Զրիստոսը:

Մարդկության, նաեւ մեր կյանքը, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, լի է տարաբնույթ մարտահրավերներով, տագնապներով ու հոգսերով՝ ընկերային, տնտեսական հիմնահարցեր, ազգամիջյան եւ միջկրոնական խնդիրներ ու հակամարտություններ, կարիք, անձնական շահի մոլուցք, զրկվածների անտեսում, արդարության, մարդասիրության պակաս եւ այլ արատներ, որոնք հետեւանք են Աստծուց հեռանալու ընթացքների: Մարդն աշխարհի իրականության առջեւ հաճախ կարծում է, որ կյանքի բարեբաղն, հասարակության բարությունը հասանելի է հատկապես նյութականի առատությամբ: Մինչդեռ, եթե

տոնը ծառայություն է, մարդկային ունակություններն ու կարողությունները՝ աղբյուր բարիքի, երկրի շենացման, կյանքի բարօրության:

Սբ Ծննդյան խորհրդով, սիրելիներ, հանապազ շնորհն ունենք Զրիստոսի հետ բարձրանալու պայծառակերպության լեռը, Տիրոջ ներկայությամբ ապրելու աստվածահաճո հոգեշեն միջավայրում եւ մեր ընթացքը հաստատուն պահելու Աստծո շնորհներում բարոյական, ճշմարիտ արժեքների վրա: Սբ Գիրքը մեզ խրատում է, որ Աստծո հետ ընթանալը փրկում է փորձություններից, բազմացնում բարիքները եւ հաղթանակներ շնորհում երկնային գործւթյամբ: Մեր պատմությունն իսկ վկայում է, որ Փրկչին հավատարմությամբ է մեր ժողովուրդը կերտել իր ստեղծագործ կյանքի հաղթանակները եւ մշակութի վերելքները: Մեր Տիրոջ հետ ենք դիմակայել փորձություններին, վեր հանել ավերներից, վերապրել ցեղասպանություն: Մեր Տիրոջ գործւթյամբ Սփյուռնում վերընծայվել ենք ու պահպանել մեր ինքնությունը, աշխարհասփյուռ միասնականությամբ վերահաստատել մեր ազատ պետականությունը, մշտապես վառ պահել տեսիլքը մեր ավետյաց երկրի, այլեւ՝ հավատը, որ Տերը համախմբելու է մեզ մեր Հայրենիքում: Այսօր «Աստված մեզ հետ է» ավետիսով հուսալամ ու քաջալեր՝ խոնարհվենք մարդացյալ Փրկչի սնարի առջեւ՝ շերմանալու Նրա սիրով, ընդունելու Նրա շնորհներն ու օրհնությունները, որպեսզի ի Հայրենիս եւ ի Սփյուռն բարեփոխենք ու զորացնենք մեր կյանքը, իրագործենք մեր ազգային նպատակները, կերտենք մեր ժողովրդի բարօր ու երջանիկ, լուսավոր գալիքը եւ հավերժ մնանք Աստծո հավատարիմ ժողովուրդ:

Այս հայցն ու մաղթանքը մեր շուրթերին՝ Սբ Ծննդյան ավետիսով եւ եղբայրական սիրով ողջունում ենք Առաքելական մեր Սբ Եկեղեցու Նվիրապետական Ա-

Տիրոջ Ծննդյան տոնի բարեմաղթանքներով ողջունում ենք Սրբազան Պատարագի արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության Նախագահ տիար Սերժ Սարգսյանին, Մեր ողջունյն ենք հղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ տիար Բակո Սահակյանին եւ հայոց պետական ողջ ավագանուն՝ հայցելով ազգաշեն ու հայրենաշեն գործոց հաջողություններ Տիրոջ երկնառաք օրհնության ներքո: Ողջունում ենք Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայացուցիչներին՝ մաղթելով, որ նրանց արգասալի ջանքերով ու մշտաւորոգ ձեռքբերումներով միշտ բարեզարդվեն մեր երկրների եւ ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը:

Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում սիրեցյալ մեր ժողովրդին ի Հայրենիս եւ ի Սփյուռն: Աղոթք ենք բարձրացնում, որ մարդացյալ Փրկչի սիրո, խաղաղության եւ համերաշխության խնդիրները հանապազ ճառագեն աշխարհում, ի մասնավորի հակամարտության մեջ գտնվող երկրներում, հատկապես պատերազմական իրավիճակում հայտնված Սիրիայում եւ այլտեղ դժվարություններ ու նեղություններ դիմագրավող մեր եղբայրների ու քույրերի կյանքում: Թող մարդկանց հոգիներում մշտապես արձագանք գտնի Սբ Ծննդյան «յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն» պատգամը, եւ ամրապնդվի Աստծո հետ ընթանալու կամքը: Թող Տերն իր Սուրբ Աջի հովանու ներքո խաղաղ ու ապահով պահպանի հայրենի մեր երկիրը, պայծառ ու անսասան՝ Առաքելական մեր Սբ Եկեղեցին եւ օրհնի աշխարհասփյուռ ազգս հայոց այժմ եւ միշտ եւ հավիտյան. ամեն:

ՔՐԻՍՏՈՍ ՏՆՍՐ ԵՒ ՅԱՅՏԵՑԱՐ:
ԱԵՃ ԵՎ ՄԵՃ ՄԵՇ ԱՌԵՏԻՍ:



Սկիզբը՝ 2012-ի թիվ 23-24

Պ. Սեւակի նախկինում գրած առանձին բանաստեղծություններին ու շարքերին («Անխորագիր», «Փետրումներ», «Լինել թե չլինել», «Թռուցիկ երգեր») եկավ ավելանալու «Եղիցի լույս» ժողովածուի «Աստծու քարտուղարը» շարքը: Ի՞նչ է բանաստեղծությունը, ո՞վ է բանաստեղծը, ո՞րն է նրա դերը ժամանակակից կյանքում, ի՞նչ կապ ու առնչություն կա նրա ու շրջապատի միջև, ինչպիսի՞ն է նա՝ որպես առանձին անհատ եւ հանրության անդամ, ի՞նչ ճակատագիր է նրան վիճակված. ահա հարցեր, որոնց պատասխանը նա փորձում է տալ շարքի եւ շարքից դուրս տպագրված գործերում:

Ձեռքը բարեկի պարզած, հոգով մերկ ու անկեղծ, մտքով աներկմիտ ու բաց՝ ժամանակի առջեւ կանգնում է իր գրական հավատամքն ու գործունեության հստակ ծրագիրն ունեցող հեղինակը: Նա անձնագոհության աստիճանի նվիրված է ճշմարիտ գործին, որը է՛լ հայրենիքն է իր պատմությամբ ու ներկա օրով, է՛լ հանրային կյանքի բարո-

ՆԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

յական օրենքներն են, է՛լ անհատի ճակատագիրն ու հոգեւոր աշխարհը, է՛լ մարդկության երթի ընդհանուր նպատակը: Իր գրական ծրագրի հիմքում Պ. Սեւակը դնում է ճշմարտության, ազնվության, անկեղծության, մաքրության, նվիրվածության, անձնագոհության բարոյական ու քաղաքացիական ըմբռնումները: Այս դիրքորոշումը նշանակում էր ամենօրյա լուռ կամ բարձրաձայն կռիվ այն ամենի դեմ, ինչը կեղծիքի, ստի, հարմարվողականության, քծնանքի, անհիմն գոհունակության տեսքով ժանգի նման նստում է կյանքի ու արվեստի վրա: Պ. Սեւակը թե՛ իր պոեզիայով ընդհանրապես եւ թե՛ իր ծրագրային գործերով մասնավորապես հանդես է գալիս կյանքը եւ արվեստը մաքրագործողի դերում, որը նաեւ անձնագոհության անհրաժեշտ պատրաստակամություն է եւթադրում: Ահա «Ճշմարիտ երգի» նրա ըմբռնումը. «Ճշմարիտ երգը ծնվում է, Ինչպես կրակը գենքի մեջ. Ետհարվածով ետ է մղում կրակողին, իսկ ում դիպավ՝ տեղնուտեղը սպանում է» (II, 215): Բանաստեղծը կողմնակից էր մարտունակ ու պայքարի դրոշմ դարձող երգի եւ ոչ թե գեղեցկաբառ քնաբեր թմբիրի: Ժամանակի առջեւ խորին պատասխանատվություն կրող քաղաքացին «Դարակեսի հիմքը» բանաստեղծության մեջ անվառան ասում է. «Մենք ուզում ենք գործի լեզուն, Բայց ո՛չ իբրեւ երկանք ստի Ու ջրաղաց խաբեության <...> Մենք ծնվել ենք, աշխարհ եկել Ո՛չ թե թվալ-երեսալու խաբեությամբ, Այլ լինելու՛, Այն լինելու, ինչ կանք իրոք» (II, 79): Պ. Սեւակը իրեն եւ իր նմաններին տեսնում է ժամանակների հավերժական հոլովության մեջ եւ վերոհիշյալ բանաստեղծության մեջ ընդհանրացնում իր ու նրանց կյանքի «օրենքը». «...Մերպեսները Նախընտրում են զրկվել գլխից, Զան

խոնարհել գլուխն իրենց նրա՛նց առաջ, Ովքեր լուրջ-լուրջ փորձ են անում Ուղեղ հատել դրամի պես Ու միտք դաջել լաթի նման» (II, 80): Կյանքի ընթացքն անկանգ շարժման մեջ տեսնող բանաստեղծն իրեն ու իր սերնդի գործը եւս տեսնում է բոլոր ժամանակների մեծերի կյանքի ու գործի կողքին եւ, հեշտ ու անցողիկ փառքը թողնելով գրական փերեզակներին, ընտրում երկրաբանի ուղին, որի գործը հողի ընդերքը պեղելն է, որ գորողի համար նույնն է, թե կյանքի շերտերի ուսումնասիրությամբ ոգու միջուկին հասնելը:

Բանաստեղծի ճակատագրի հետ մեկտեղ Պ. Սեւակը գրում էր բանաստեղծության ճակատագրի մասին՝ անընդհատ արծարծելով այն հարցը, թե ձեռով ու բովանդակությամբ ինչպիսին պիտի լինի այն ժամանակակից կյանքում: Բոլոր ճշմարիտ նորարարների նման նա եւս բանաստեղծությունը դուրս էր հանում բանարվեստի օրենսգրքերից եւ «Օրենքներ չկան, կա լույս իրավունք» ելակետային կողմնորոշմամբ վերստին հայացք ուղղում հոսող կյանքին ու հավերժական, բայց անկրկնելի բնությանը: Պ. Սեւակն արվեստի չափանիշ է համարում իրական, պարզ ու մերկ կյանքը («Արվեստ», «Անտառի վիպասքը», «Երգել», «Անհարց պատասխան») եւ ապա անցնում իր արվեստի արհեստի մեկնաբանությանը: Ըստ բանաստեղծի՝ սովորույթի ուժը թմբիրի մեջ է պահել մարդու միտքը, եւ նա քնած է մնացել մեծ ուղտի փոքր ականջում: Սրան անմիջապես հետեւում է խոնարհ թվացող, բայց հանդուգն «Խոստովանությունը». «Հա՛յր սուրբ, ես կուզեի դարձնել կանոն Անկանոնությունը: Մեծ մե՛ղք է սա» (II, 209):

Ստեղծագործական ծրագիրն աստիճանաբար տարբերակում է ճշմարիտ բա-

նաստեղծին կեղծ գեղեցկախոսից, դժվարությամբ իր ինքնուրույն տեղը արվեստի մեջ հաստատողին՝ փառքի ժամանակավոր տերերից («Բանաստեղծի բախտը», «Մի խորունկ գաղտնիք»): Այդ զգացողությունը նա ունի թե՛ անցյալի մեծերի կյանքի ու գործի, թե՛ իր ապրած օրերին ապագայից ուղղվող հայացքի գիտակցությամբ: Այդ գիտակցությամբ էր, որ նա տալիս էր իր գրական գործի ետմահու գնահատականը եւ իրեն տեսնում վաղվա օրվա մեջ. «Գիտե՛մ: Ես էլ եմ գնալու շուտով... Բայց չե՛մ կորչելու: Դառնալու եմ ձեր... առողջությունը» (VI, 94):

Ինչպես ասվեց, ժամանակի հայ պոետիան, հանձին Պ. Սեւակի, մի կողմից առաջադրում էր ընդգծված նորարարական միտում, մյուս կողմից՝ Հ. Շիրազի ու Հ. Սահյանի ջանքերով հիմնավորապես պահպանում ավանդական սկզբունքները: Իր բազմաթիվ ծրագրային բանաստեղծությունները **Շիրազը** ի մի բերեց «Երկերի» հիևգհատորյա ժողովածուի «Յելիկոնի երգը» շարքում: Ըստ նրա՝ պոետիան նախ եւ առաջ բնության ձայների ու երեւոյթների, բնության հավերժական օրինաչափությունների առանձնահատուկ վերարտադրություն է: Բնությունը նրա պատկերացմամբ ամեն ինչի մայրն է, խղճի, բարության պատվարը՝ ընդդեմ կյանքի բիրտ ուժերի ու միաժամանակ՝ բանաստեղծի ազատ տարբերի նախահիմքը.

Ո՞վ կարող է հավքին ասել՝ այսպես երգիր, այնպես՝ չէ, Կամ երամին հրամայել՝ այսպես ձգվիր, այնպես՝ չէ. Դրամանով երգող սոխակն իսկույն թութակ կդառնա, Իմաստունը կասի՝ կնոջն՝ այսպես երկնիր, այնպես՝ չէ:

Շարունակությունը՝ էջ 5

«Քանի որ ինձ համար կյանքը Քրիստոսն է...»

Քրիստոսի ծնունդը Հայր Աստծո անչափելի եւ անսահման սերը բացահայտող հավիտենական ապացույցն է, որ մեկ անգամ եւս իրական է դառնում մեր կյանքի մեջ: Եվ մեր հոգիներում աղոթք դարձած շարականի բառերը, թռիչք առնելով հավատքի գործությամբ, հաղորդում են փրկարար լուրը.

Այսօր տոն է սուրբ ծննդեան, աւետիս, Տեառն մերոյ եւ յայտնութեան,

աւետիս,

Այսօր արեւն արդարութեան, աւետիս, Երեւեցաւ ի մէջ մարդկան, աւետիս...

«Մեր Տեր եւ Փրկիչ Քրիստոսի սուրբ ծնունդը փիլիսոփայություն չի պահանջում, այլ այն պարզ բացատրությունը, որ արդեն իսկ արձանագրված է Հովհաննես ավետարանչի կողմից. «Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի, ով Նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը. որովհետեւ Աստված իր Որդուն չուղարկեց աշխարհ, որ դատապարտի աշխարհը, այլ որպեսզի աշխարհը Նրանով փրկվի» (Հովհ. Գ 16-17)»,- գրում է ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Հովհան արք. Տերտրյանը:

Տիրոջ ծննդյան փառավոր ու սքանչելի աստղը սուրբծննդյան գիշերը մոգերին առաջնորդեց դեպի աստվածախույս քաղաք: Այսօր այդ աստղն առաջնորդում է մեզ՝ ընթանալու բարի ու առաքինի կյանքի ճանապարհով, աստվածահաճո գործերով մոտենալու եւ երկրպագելու մարդացյալ Փրկչին, մեր կյանքը նվիրաբերելու Նրան, չեղմանալու Նրա մեծ ու անսահման սիրով, լուսավորվելու Նրա ողորմության ու գթասրտության անսպառ շողերով:

«Նրան, ով մեղքը չէր ճանաչել, Աստված մեզ համար մեղավոր արեց, որպեսզի մենք նրանով Աստծու արդարները լինեց» (Բ Կորնթ. Ե 21), ամենամաքուրն ու կատարյալը՝ հոժարությամբ կրելով մարդկային մեղքերի վիթխարի խաչը, իր սուրբ հարությունից ու կենսաճառագ լույսով ազատեց մեզ հոգեւոր խավարից: Նրա

հայտնությամբ սրբվեց մեղավոր մարդկությունը, անհետացավ մեզը, քանզի Աստվածորդին «կամովին եկավ եւ ամբողջովին լուսավորեց նրանց, ովքեր Նրա առջեւ կանգնելու փափագ ունեին» (սբ Բարսեղ Կեսարացի):

Քրիստոսը՝ մարդացյալ Փրկիչը, մեզ հետ է բոլոր օրերում՝ մինչեւ աշխարհի վախճանը (Մատթ. ԻԸ 20), մեզ հետ է հոգեւոր վերելքի ճանապարհին՝ իր մեծ սիրով, անսահման ողորմությամբ ու գթասրտությամբ:

Հոգեւոր վերելքի ճանապարհը նեղ է, փշոտ, սակայն դրանով ընթանալը եւթադրում է հոգեւոր եւ բարոյական աճ, մարդու անձի կատարելագործում: Դեպի Աստված տանող ճանապարհը վերընթաց ճանապարհ է, իսկ վեր բարձրանալը միշտ էլ շատ ավելի դժվար է, քան վար իջնելը:

Պատմում են, որ մի փիլիսոփա, իր աշակերտներով շրջապատված, քայլում է Ալեքսանդրիայի փողոցներով՝ նրանց պատմելով կյանքի գաղտնիքները, նրա հոգեւոր հիմունքների մասին: Ճանապարհին նրանց մի անառակ կին է հանդիպում: Մոտենալով փիլիսոփային՝ նա վստահ ասում է. «Ուսուցի՛չ, դու ամբողջ կյանքում քո աշակերտներին ամենայն իմաստություն եւ ճշմարտություն ես ուսուցանում, հոգում ես, որ նրանց կատարյալ եւ մքրոր լինեն, եւ նրանք հետեւում են քեզ: Սակայն հենց որ ես մատով մոտ կանչեմ, նրանք քեզ տեղն ու տեղը մենակ կթողնեն եւ կվազեն իմ հետեւից»: Փիլիսոփան անմիջապես համաձայնվում է այս խոսքերի հետ, սակայն նկատում. «Դու ճիշտ ես ասում, սակայն քո ճշմարտության հիմքում մի հանգամանք է ընկած: Ես իմ աշակերտներին մղում եմ ավելի ու ավելի վեր բարձրանալ, իսկ դու նրանց կարող ես միայն առաջարկել ներքեւ գլորվել, իսկ իջնելն ավելի հեշտ է, քան վեր բարձրանալը»:

Չորանալով Տիրոջ կենարար լույսով ու ջեմությամբ՝ թոթափեց մարդկային տկարություններն ու մեղքերը՝ վեր բարձրանալով բարի ու արդար կյանքի ճանա-



պարհով, հոգեւոր բերկրանքով եւ խնդության մեջ լցնելով մեր եւությունը, սիրտն ու հոգին՝ առ Աստված հարատեւ հույսով, անհուն հավատով եւ բոցավառ սիրով: Ձանակք բարի գործերով ստանալ Տիրոջ բարեհաճությունը, իսկ բեթղեհեմյան աստղը կլինի մեր առաջնորդող ուժը՝ դեպի ճշմարտություն, հավիտենական կյանք եւ հավերժ փրկություն: Մեր սերը ցուցաբերեց Աստծո կողմից մեզ վստահված սրբությունների հանդեպ, որոնք են ընտանիքը, Եկեղեցին, զավակները, հարազատ մարդիկ: Օծյալի հետ նորոգեց մեր ուխտը նոր կյանքի խորհրդով, ու «մերժեց ամբարշտությունը եւ աշխարհիկ ցանկությունները, այս աշխարհում ապրելը զգաստությամբ, աստվածապաշտությամբ եւ ակնդետ սպասելը երանելի հույսին եւ փառքի հայտնությանը մեծն Աստծու եւ մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի, որ իր անձը տվեց մեզ համար, որպեսզի մեզ փրկի ամեն անօրենությունից եւ մաքրի որպես իր սեփական ժորովորդ՝ նախանձախնդիր բարի գործերի» (Տիտոս Բ 12-14):

*Մարիամ ԱՎԵՏԻՍԱՆ
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
քարոզչական կենտրոն*

«Ահա կույսը պիտի հղիանա եւ մի որդի պիտի ծնի, եւ Նրան պիտի կոչեն Էմմանուել, որ նշանակում է Աստված մեզ հետ»

(Մատթ. Ա 23, Եսայի Է 14)

Հունվարի 6-ին Հայ Առաքելական Եկեղեցու լուսեղեն խորաններից մատուցվում է սուրբ եւ անմահ Պատարագ, եւ տրվում է փրկարար ավետիսը՝ «Քրիստոս ծնավ եւ հայտնեցավ. մեզ եւ ձեզ մեծ ավետիս»:

«Երկնքի անհասանելի բարձունքներից մարդասեր Տերը խոնարհվեց եւ որպես մանուկ ծնվելով քարայրում՝ աղքատացրեց Իրեն, որպեսզի մեզ հարստացնի հոգեւոր բարիքներով: Պողոս առաքյալն ասում է. «Գիտե՛ք շնորհները մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որ ձեզ համար աղքատացավ, Նա, որ հարուստ էր, որպեսզի դուք Նրա աղքատությամբ հարստանաք» (Բ Կորնթ. Ը 9): *Աստված մարդացավ, որպեսզի Աստծո պատկերով ստեղծված մարդը ճանաչի իր Կրարչին, Նրա կամքը, հարստանա հավատքով, Աստծո խոսքով, հարստանա աստվածահաճո կյանքի փափագով ու փութաջանությամբ եւ փրկության արժանացած՝ ժառանգի հավիտենական կյանքը*», - սուրբծննդյան քարոզում նշեց Վեհափառ Հայրապետը:

«Եվ դու, Բեթղեհեմ՛, Հուդայի՛ երկիր, Հուդայի առաջնորդների եւ իշխանների մեջ ոչնչով ավելի փոքր չես, քանզի քեզնից մի իշխան պիտի ելնի, որ պիտի հովվի Իսրայելին» (Մատթ. Բ 6): «Բեթղեհեմ» բառը թարգմանվում է հացի տուն, ուր ծնվեց Կենդանի Հացը, որ երկնքից իջնելով՝ կենդանություն պարգեւեր աշխարհին. «Թե մեկն այս հացից ուտի, հավիտենապես կպարի» (Հովհ. 2 52): Նա եկավ մեզ՝ հողեղեններին հավիտենական կյանք պարգեւելու, ազատելու մեղքի, անգիտության խավարից եւ իր աստվածային լույսին ու ճշմարտությանն արժանացնելու: Ինչպես վկայում է Տերը. «Ես եմ աշխարհի լույսը. ով Իմ հետեւից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը» (Հովհ. Ը 12):



Սկիզբը՝ թիվ 23-24

Քսաներորդ դարի ամենանշանավոր հայագետներից մեկը՝ Յակոբ Անասեանը, որ տիրապետում էր արեւելեան եւ արեւմտեան մեծած եւ կենդանի մի շարք լեզուներ, 1979 թ. առիթ ունեցել է անդրադառնալու հայերէնի ուղղագրութեան հարցին: «Հայերէնի ուղղագրութիւնը,- գրել է նա,- դարերի ընթացքում յոկուած, կատարելագործուած մի հոյակապ կառոյց է, որը կարող է նախանձը շարժել շատ ժողովուրդների, որոնց թուով՝ ֆրանսերէնի եւ անգլերէնի նման մեծ ու կարեւոր լեզուների տերերի: Նա գիտական այն տարազն է, որով վայելչապէս հանդերձաւորուել է մեր լեզուն հնագոյն ժամանակներից ի վեր եւ որն այսօր էլ յաջողապէս հանդերձաւորում է մեր գրական երկու լեզուները՝ արեւմտահայերէնն ու արեւելահայերէնը: Դա մեր պատմական ուղղագրութիւնն է» (դոկտ. Յ. Ա. Անասեան, Մանր երկեր, Լոս Անջելես, 1987, էջ 923):

Իսկ մեր «ուղղագրական ռեֆորմը» ժամանակի հետ որքան հնանում էր, այնքան անելի պարզուած էին թերութիւնները: Տասնամեակներ անց հայոց լեզուի բուհական դասագիրքը սովորեցնելու էր, որ 1940-ի «բարեփոխութեամբ մասամբ դարմանուեց Արեւելեան անյաջող ուղղագրութիւնը» (Գ. Ջահուկեան եւ ուրիշներ, «Հայոց լեզու», 1 մաս, Ա պրակ, Երեւան, 1980, էջ 174): Մտաւոր գործիչների՝ գիտնականների, գրողների բողոքները 20-30-ական թվականներին չէին դադարում: **Չդադարեցին նաեւ «մասնակի բարեփոխումից» յետոյ:** Վերանայման անհրաժեշտութիւնն

ՄԵՆՔ ԵՒ «ՆԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՅԵՂԱԾՈՒՄՈՒԹԻՒՆԸ»

զգում էին բոլորը, այդ թւում՝ նոյնիսկ Մակնիսեանն ինքը, ճիշտ է՝ այլ ելակետից: Բայց պատկան մարմինները չէին յաղթահարել քսանամեայ ինտրոյկան: Այնուամենայնիւ հարցը հասունանում էր, եւ ամենից անելի սպասելի էր «փոխարարած գիշումների» տարբերակը: Իշխանութիւնները չէին կարող լիակատար վերադարձ թոյլատրել, լիովին ընդունել սխալը, ուստի նախընտրում էին «մասնակի բարեփոխումը»: Միւս կողմից՝ օրակարգից դուրս չէր *խորհրդային ազգ* ցնորական գաղափարը:

Հասունացել էր ուղղագրական երկրորդ հրովարտակի խնդիրը. - Ուրեմն երկու տասնամեակ պէտք եղաւ հասկանալու համար, որ խորհրդային ժողովուրդների լեզուներն այբուբենի եւ տպագրութեան խաթարումով չեն ծուլուելու, ուստի փոխեցին պայքարի ուղղութիւնը: Հրապարակուեց հայերէնի ուղղագրութեան վերանայման՝ 1940 թ. օգոստոսի 22-ի՝ ՀԽՍՀ Լուսժողկոմատի կողմից որոշումը («Հայոց այբուբենի եւ գրութեան մէջ է եւ օ տառերը վերականգնելու եւ միջազգային դարձած մի շարք տերմիններ հայոց լեզուում արմատացնելու մասին»), որով իբրեւ փոխգիշում՝ կիրառութեան էին յանձնարարում «մեր առօրեան արտայայտող» բառեր, ինչպէս՝ *պարտիա, սովետ, ռեւոլյուցիա, կոնստիտուցիա, սեսիա, ռեսպուբլիկա (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1940, թ. 200):* Որոշմամբ վերանայուեց ուղղագրութիւնը, մերժուեցին նախկինի մի շարք սխալներ, ո՛չ բոլորը: Այդ գործոյթը ժամանակի խորհրդային բոլոր մասնագետները նոյն ձեւակերպումով են բնութագրում՝ «մասնակի բարեփոխումներ»: «Է եւ օ տառերի վերականգնումը մեր այբուբենում ուղղում է մի սխալ, որը կատարուել է 18 տարի առաջ եւ որը ոչ մի օգուտ չի տուել»,- կարդում ենք հանրապետության գլխաւոր թերթի վերը նշուած համարի առաջնորդողում: Պաշտօնաթերթը խոստովանում է՝ «նոր» ուղղագրութիւնը «ոչ մի օգուտ չի տուել»:

Ուրեմն, ընդառաջելով բազմաթիւ հիմնաւոր առաջարկութիւններին՝ կառավարութիւնը որոշ գիշումներ կատարեց ուղղագրական հարցերում, բայց առաջարկեց կիրառութիւնից հանել բազմաթիւ ամենագործածական հայերէն բառեր՝ փոխարինելով «միջազգային տերմիններով»: «Հայ-

կական ԽՍՀ Լուսժողկոմատին կից գրական հայերէն տերմինների ու նորմաների կոմիտէն» սահմանում էր՝ «հայոց լեզուում գիտական ու գիտատեխնիկական տերմիններ կազմելու եւ հաստատելու ելակետ է հանդիսանում ՀամԿ(Բ)Կ ազգային քաղաքականութիւնը», իսկ փոփոխութիւնների նպատակն էր՝ «խստիւ պայքարել ազգային ձեւերը ֆետիշացնելու փորձերի դէմ» (*«Խորհրդային Հայաստան», անդ*):

Հայաստանի համայնաւար (կոմունիստական) կուսակցութեան կենտրոնական կոմիտէի նոյն պաշտօնաթերթը 1940 թ. սեպտեմբերի 8-ին (թիւ 210) բարեփոխումների առթիւ տպագրել է պրոֆեսոր Արարատ Դարիբեանի «Հայերէնի ուղղագրութեան մասնակի բարեփոխութիւնը» յօդուածը, ուր ի միջի այլոց ասուած է. «Այդ մասնակի բարեփոխումով վերականգնում է անանդական կապը նախորդ գրական լեզուների հետ, կատարում ուղղագրական ռեֆորմի հիմնական սկզբունքներից մեկը եւ *վերացնում է Նրա հիմնական թերութիւնները*» (ընդգծումը մերն է): Յօդուածագիրը, անդրադառնալով փոփոխութեան երրորդ կետին («Բարդութեան եւ ածանցման ժամանակ ոչ մի բառ իր ուղղագրութիւնը չի փոխում»), գրում է. «Այս վերջին կանոնը վերացնում է ուղղագրութեան ռեֆորմի այն թերութիւնը, ըստ որի՝ փոփոխում էր բառապատկերը, եւ միեւնոյն բառն առանձին՝ տարբեր ուղղագրութիւն ունէր, իսկ բարդութեան մէջ՝ տարբեր, օրինակ՝ յերգ-համերգ, վորոշ-անորոշ եւ այլն: Բացի այս, ուղղագրութեան այս կանոնը նաեւ կնպաստի ածանցաւոր եւ բարդ բառերն անելի խոր ըմբռնելուն, քանի որ ուղիղ գրելու շահագրգռութիւնը կթելափոխի ստուգաբանելու բառը, հասկանալու այդ բառը»:

«Մասնակի բարեփոխում» յորջորջումը մի տեսակ լուռ խոստովանութիւն էր՝ դեռեւս անելիքներ կան: Ի թիւս այլոց՝ այդպիսի յոյս փայփայում էին Հր. Աճառեանն ու Ստ. Մալխասեանը: Վերջինս իր քառահատոր բառարանը հրատարակեց աւանդական ուղղագրութեամբ: Բայց դա նրան յաջողուեց մոսկովեան կառավարութեան միջամտութեամբ միայն: Հանգամանք, որ անելորդ անգամ վերահաստատում է՝ հայոց լեզուի ուղղագրութիւնը տեղական իշխանութիւնների իրաւասութիւնից վեր մի գործ էր:

Նոր որոշմամբ յոյս էր ծագում, որ բարեփոխումները հետեւողական կլինէն, եւ կվերացնէն խորհրդային իշխանութեան՝ վաղ շրջանի ծայրահեղականութեամբ թելադրուած բոլոր նշանակալից թերութիւնները: Մտաւորականութիւնը դիմում էր բոլոր հնարաւոր ատեաններին՝ արագացնելու եւ աւարտին հասցնելու ազգային մշակոյթի համար կարեւորագոյն նշանակութիւն ունեցող գործը:

Նոր որոշումից շատ չանցած՝ ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճիւղի «Տեղեկագիրը» տպագրում է երիտասարդ գրականագետ, մասնաճիւղի՝ գրականութեան եւ լեզուի ինստիտուտի գիտական քարտուղար Խորեն Սարգսեանի կուռ եւ հիմնաւոր յօդուածը՝ «Հայոց ուղղագրութեան մի քանի հարցերի շուրջ», որ, կարծում ենք, արտայայտում էր ոչ թէ լոկ հեղինակի, այլ նաեւ նրա աշխատանքային ընկերների, գիտական հաստատութեան կարծիքը: Պակաս կարեւոր չէ եւ այն փաստը, որ յօդուածը գրուած էր ռուսերէն եւ ըստ էութեան հասցեագրուած էր «վերեւներին»:

Մի կողմ թողնելով հեղինակի շատ հետաքրքրական դիտարկումներն ու մտքերը՝ յիշենք մի հանգամանք:

Խ. Սարգսեանը մատնանշում է 1922 թ. երեք անընդունելի կանոն, որոնք պահպանուել են մասնակի բարեփոխումից յետոյ. ա. *եա* երկձայնի փոխարէն *յա* գրելը, բ. *եօ* (եօ) երկձայնի փոխարէն *յո* գրելը, գ. *յւ* երձայնի փոխարէն *յու* գրելը (*Մ. Ս. Սարգսյան, Օ некоторых вопросах армянской орфографии. «Տեղեկագիր» ՀԽՍՀ ԳԱ Հայկական մասնաճիւղի, 1940, թ. 4-5, էջ 115-116*):

Եւ յօդուածագիրն ընդգծում է. «Ներկայիս հայերէնի ուղղագրութեան ստիպողական պահանջն է 1922 թ. սխալների վերացումը, այսինքն՝ վերացումը այն փոփոխութիւնների, որ մոծուել են այբուբենի մէջ» (*անդ, էջ 116*), ի վերջոյ եզրակացնելով՝ *Է եւ օ տառերի վերականգնումը, անկասկած, միայն մասնակի փոփոխումն է գործող այբուբենի, միայն նրա առաջին փուլը: Յետայսու սպասելի են նոր բարեփոխումներ Հայերէնի ուղղագրութեան եւ, մեզ թւում է, առաջին հերթին՝ եա, եւ, յւ* [գրութիւնների] վերականգնումը» (*անդ*):

Շարունակւոթյունը՝ էջ 6

ԳՎՐԵԳԻՆ ՆԺԴԵՂԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵՎՆ ԵՒ ՆՎՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՎԱԻՆ

Սկիզբը՝ 2012-ի թիվ 24

Այժմ քննենք «Մեր յեղափոխութեան արարիչը» յօդուածը: Զանի որ այն ընդամենը երեք էջ է, խաթարիչները չեն համարձակուել բնագիրը հրատարակել կրճատում-աղաւաղումներով, ուստի ամբողջ նախադասութիւնից անջատել են իրենց պէտք եկած մասը, ներկայացրել ու մեկնաբանել իրենց ուզած ձեւով՝ թէ իբր Գարեգին Նժդէղը հայ ժողովրդին ասում է.

«ԻՆչը մղեց քեզ միամտօրէն հաւատալու ցնորապաշտ Նազովրեցու վտանգաւոր խօսքին: Դու խաբուած ես, ժողովուրդ, որ գոհն ես քրիստոնէական բարոյախօսութեան, որ շարունակում է մնալ որպէս ներկ եւ շպար, որպէս քօղ եւ դիմակ՝ ուժեղների հոգու համար»:

Մինչդեռ Նժդէղի խօսքերն ամբողջովին մէջբերելու դէպքում ուրիշ բան է պարզուում: Ահա այդ հատուածը՝ բովանդակութեան եւ մտքի վրայ եականօրէն չանդադարձող որոշ կրճատումներով. **«Գողգոթայէն՝ Արեւմտահայաստանէն կը բարձրանար աղաղակը հաւաքավառ խաչեցեալի,- օգնութիւն, փրկութիւն ինձ: Իսկ մարդկութիւնը՝ յանցաւոր ու անտարբեր, կը պատասխանէր.- Ծարա՛ւ ես, արբ արցունքը... Կոտորո՛ւմ ես, որովհետեւ թոյլ ես... Վարուց է, ինչ եկեղեցիներից գանգերի քաղցր ողջանքը չես լսում, առանց խոնարհ եւ վեհութեան կը սողա՛ս միայն - ստրո՛կ ես՝ դո՛ւ ես մեղաւոր, դո՛ւ: ԻՆչը մղեց**

քեզ միամտօրէն հաւատալու ցնորապաշտ Նազովրեցու վսեմ, բայց վտանգաւոր խօսքին: Ո՛վ ասաց, որ թոյլը մեղաւոր չէ, որ թոյլ է...Դու խաբուած ես, ժողովուրդ, որ գոհն ես քրիստոնէական բարոյախօսութեան, որ շարունակում է մնալ որպէս ներկ եւ շպար, որպէս քօղ եւ դիմակ՝ ուժեղների հոգու համար: Թուկութիւնը, ասում է աշխարհը, ծնուած է սնուցանելու ուժը: Ուժն է ծնում իրաւունքը... Ա՛յս էր աշխարհը հայկական Գողգոթայի հանդէա՛... Այսպէս կը պատասխանէր մարդկութիւնը մահուան դատապարտուած այս ժողովրդին» (*Գարեգին Նժդէղ, Երկեր, հտ. առաջին, Եր., 2002 թ., էջ 310-311*):

Նախ՝ այս խօսքերը քրիստոնէութիւնը մերժող, առաւել եւս «**Նոր կրօն**» ստեղծելու հիմք հանդիսացող մտքեր չեն, ինչպէս ճգնել են ներկայացնել: Այստեղ ասում է, որ **աշխարհը մեզ համարում է քրիստոնէական բարոյախօսութեան գոհը:**

Երկրորդ՝ ամենակարեւորը. սրանք Նժդէղի խօսքերը չեն, այլ **աշխարհի** պատասխանը «**մահուան դատապարտուած այս ժողովուրդին**»: Դրանք ոչ միայն նրա խօսքերը չեն (**«մարդկութեան», «աշխարհի»** խօսքերն են՝ ուղղուած **«հաւաքավառ խաչեցեալին»**՝ հայ ժողովրդին), այլեւ իր համար անընդունելի, այպանելի են, քանի որ այդպէս ասողներին նա յայտարարում է **«յանցաւոր ու անտարբեր»:**



Իրօք, եթէ քրիստոնէութեան մասին նրանց մէջբերած խօսքերը, բառացի ընկալելով, համարենք Նժդէղի կարծիքը, ապա նոյն տրամաբանութեամբ պիտի մէջբերենք նաեւ նրա **«Ծարա՛ւ ես, արբ արցունքը»** միտքը եւ յայտարարենք, որ Նժդէղը **«Մեր յեղափոխութեան արարիչը»** դամբանականում հայ ժողովրդին կոչ է անում՝ ծարաւելիս խմել սեփական արցունքը... Մինչդեռ թէ՛ այստեղ եւ թէ՛ ընդհանրապէս Գարեգին Նժդէղի գրեթէ բոլոր մտքերը ոչ թէ պիտի ընկալենք իբրեւ սովորական յօդուածի խօսքեր, այլ դրանք մեր ոսկեդարի պատմիչների մատենների նման պէտք է դիտարկենք որպէս գեղարուեստական պատկերաւոր մտածողութեան անզուգադիր **կտորոգումներ:**

Կարծես Նախագալով, որ մի օր կարող են գտնուել մարդիկ, որ իր խօսքերը պիտի ընկալեն եւ մեկնաբանեն իրենց ուզածի պէս, Նժդէղն իր յիշեալ դամբանա-

կանի դիտարկող հատուածի **սկզբում** էլ, **մէջտեղում** էլ, **վերջում** էլ շեշտում է, որ «յանցաւոր ու անտարբեր» մարդկութիւնն էր մեզ այդպէս ասում, «պատասխանում»:

Նոյնը վերաբերում է նաեւ մէջբերուած հատուածում նրա օգտագործած՝ «Ուժն է ծնում իրաւունքը» ասոյթին: Այդ խօսքերը գեղարուեստական թարգմանութիւնն են 1896 թ. սինականութեան հիմնադիր Հերցելի Բագելում կարդացած «Սիոնի իմաստունների արձանագրութիւնները» դասախօսութեան մէկ արտայայտութեան: Նշածս միտքը, որով սկսում է թիւ առաջին արձանագրութիւնը, բառացի թարգմանում է այսպէս. «Իրաւունքը ուժի մէջ է»: «Սիոնի իմաստունների արձանագրութիւնները» ամբողջութեամբ հայերէն է տպագրուել Սոֆիայի «Ռազմիկ» եռօրեայ թերթում 1942 թ. սեպտեմբերի 9-ի համարից (չորեքշաբթի) մինչեւ 1943 թ. փետրուարի 18-ը: Հրատարակիչ՝ Գարեգին Նժդէղի գինակից Կարոյ Գեորգեան:

Այնպէս որ, Գարեգին Նժդէղին վերագրուող ու բազմիցս որպէս նրա ասոյթ մէջբերուած՝ «Ուժն է ծնում իրաւունքը» մտքի հեղինակը եւս ինքը չէ, այլ օտարների («Յանցաւոր ու անտարբեր» մարդկութեան) «պատասխանը» «հաւաքավառ խաչեցեալին»՝ հայ ժողովրդին...

Այժմ նրա տարբեր աշխատութիւններից մէջբերեմ Զրիստոսի, քրիստոնէութեան եւ իր պաշտամունքներից մէկի՝ Հայաստանեայց Եկեղեցու մասին արտայայտած բազմաթիւ մտքերից մի փունջ՝ համոզելու համար, որ ոչ մէկը բարոյական իրաւունք չպիտի ունենար նրան ներկայացնելու իբր թէ քրիստոնէութեան ու Հայ Եկեղեցու հանդէպ աննպաստ մտքեր արտայայտած հեղինակի:

Շարունակւոթյունը՝ էջ 6

ՀՈՎԻՎՆ ՈՒ ՆՐԱ ՀՈՏԸ

ՄԱՇՎԱՄԲ ԲԱՑՎՈՒՄ ԵՆ ԴՌՆԵՐԸ ՇԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՆ...

Ձեր հարցերին պատասխանում է Կյուրեղ քահանա SULՅԱՆԸ
Ձեր անունից հարցերն ուղղում է մեր թերթի արտահաստիքային թղթակից Անժելա ԿԱՉԱՏՐՅԱՆԸ

- Տե՛ր հայր, գաղտնիք չէ, որ մահը միշտ էլ վախի զգացումով է համակել մարդուն: Ինչո՞ւ է մարդը վախենում մահվանից, եւ ո՞րն է մահվան քրիստոնեական ընկալումը:

- Մարդը վախենում է մահվանից, որովհետեւ մերօրյա մարդու եւ ընդհանրապես մարդու պատկերացմամբ մահն ամենավատ բանն է, որ կարող է պատահել մարդու հետ: Հոգեբուության, հոգեբանության մեջ հայտնի է «մահվան վախ» արտահայտությունը: Մարդը վախենում է մահվանից, եւ դա բնական է, որովհետեւ մարդը չի ստեղծված մահանալու համար, մահը մարդու համար բնական չէ: Տարօրինակ երեւոյթ է. մարդն այսօր կա, իսկ վաղը կարող է չլինել, անսովոր է, եւ արժե վախենալ: Մահվան վախը շատ լուրջ բան է, հոգեբանական, հոգեկան խնդիրներ կարող է ծնել մարդու մեջ, այն մարդու մեջ, ով Աստծուց հեռու է: Բայց պետք չէ ամենից շատ վախենալ դրանից: Այն մարդը, ով Աստծուն չի ճանաչում (ինչը համատարած է այսօր), վախենում է մահվանից, որովհետեւ մահը կյանքի կորուստն է, այնինչ քրիստոնյա մարդը հավատում, գիտակցում, վստահում է Աստծո խոսքին, որ մահը ոչ թե կյանքի կորուստ է, այլ փոփոխություն է իր ընթացքի մեջ: Տերն ասում է. «Մի գարիուրեք նրանցից, որ մարմինն են սպանում եւ դրանից հետո ավելի բան անել չեն կարող, այլ ցույց կտամ, թե ումից պետք է վախենաք: Վախեցեք նրանից, ով սպանելուց հետո գեհենն նետելու իշխանություն ունի» (Ղուկ. ԺԲ 4, 5): Տարօրինակ բան է ասում Տերը՝ չվախենալ մեզ սպանողներից: Քրիստոնյայի համար մահը լրիվ ուրիշ բան է: Քրիստոնյան եւս վախենում է մահվանից, բայց վախենում է այլ կերպ, վախենում է Աստծո առաջ կանգնել անպատրաստ, եթե չի հասցրել ապաշխարել:

րել, մեղքերի համար թողություն խնդրել, մարդկանց հետ հաշտվել, ներել իր դեմ չարիք գործողներին: «Հող էիր եւ հող պիտի դառնաս», - ասում է Սուրբ Գրքը (տե՛ս Ծննդ. Գ 19): Սրանից ոչ ոք խուսափել չկարողացավ: Եվ դրա պատճառը եղավ մեղքը: Հիշենք եդեմական պարտեզը. մարդը մահկանացու դարձավ մեղանչելով, որը ժառանգաբար անցնում է սերնդեսերունդ: Բայց Աստծո այդ անեծքի մեջ մեծ օրինություն էլ կար: Պատկերացնենք, որ մեղավոր մարդը հավիտենապես գոյություն ունենար՝ մեղքի հետ մեկտեղ, ահավոր մի բան կլիներ: Հիշենք Անառակ որդու առակը (տե՛ս Ղուկ. ԺԵ 11-32): Որդին թողեց հայրական տունը եւ գնաց հեռու մի աշխարհ: Այստեղ ներկայացված է մարդ-Աստված հարաբերությունը: Որդին Հորից կտրվեց, հայտնվեց մահվան վիճակում: Եվ երբ զոջումով ու ապաշխարությամբ վերադարձավ Հոր մոտ, մահից կյանքի անցավ: Աստված ողորմած եւ գթած Հայր է, որ պատրաստ է ներել Իրեն դիմող Իր որդիներին: Մարդը հավիտենական կյանքի համար է ստեղծված: Մեր Տերը մեզ հավիտենական կյանք, փրկություն բերեց: Մենք ասում ենք, որ կա ժամանակավոր կյանք եւ հավիտենական կյանք, կա մահ եւ հավիտենական մահ, որն Աստծուց կտրված վիճակն է: Չե՞ որ այն մարմինը, որը մարդն ստանում է մեռելների հարության օրը, հոգեւոր մարմին է, չի կարող վերանալ: Աստված է, որ հրեշտակների պես պետք է լինենք: Եվ այդ մարմնով մեղավոր մարդը հավիտյան գրկված կլինի երջանկությունից, լուսիսից, կյանքի Աղբյուրից, ուրախությունից:

- Տե՛ր հայր, փաստորեն մահվանք ամեն ինչ չի ավարտվում, այլ սկսվում է միայն: Ասվում է, որ մահվամբ բացվում են դռները հավիտենության: Մահը

վերջն է այս ժամանակավոր կյանքի եւ սկիզբը՝ հավիտենության: Ինչպե՞ս հասկանալ:

- Մահվամբ բացվում են դռները հավիտենական կյանքի, երկնքի արքայության, եւ դա նրանց համար, ովքեր այս կյանքն ապրեցին Տիրոջ հավատալով, վստահելով, սիրելով, Նրա հետ լինելու ձգտումով... Իսկ հավիտենական տանջանքի դռները բացվում են նրանց համար, ովքեր մերժել են Տիրոջը, իրենց կյանքն ապրել են միայն իրենց հաճույքների, վայելքների համար՝ անտեսելով Աստծուն:

- «Մի փնտրիր անմահություն՝ ծնված լինելով մահկանացու», - ասում է սբ Հովհ. Ոսկեբերանը: Ցավոք սրտի, մերօրյա մարդն այնպես է ապրում աստվածապարզել իր կյանքը, կարծես անմահ է եւ իր առջեւ դեռ տասնյակ տարիներ ունի ապրելու: Ինչպե՞ս մարդը կարող է գալ այն գիտակցությանը, որ հավերժ չի ապրելու, որ մի օր ինքն էլ պիտի գնա այս աշխարհից:

- Մարդը պետք է հասկանա՝ ի՞նչ է կյանքը, ճանաչի կյանքի Աղբյուրին, իր Արարչին, հավատա, վստահի Նրան, հասկանա, որ ինքն արարած է եւ Արարիչ ունի երկնքում: Այո՛, մենք բոլորս ապրում ենք այնպես, կարծես մեր առջեւ հազարավոր տարիներ ունենք: Տերն ասում է՝ վաղվա օրը քոնք չէ: Լավագույն օրինակ է Տիրոջ պատմած Անմիտ մեծահարուստի առակը (տե՛ս Ղուկ. ԺԲ 16-21): Մի մարդ հսկայական բերք է ստանում եւ քանի որ տեղ չունի այն ամբարեւելու, մտածում է իր շտեմարանները մեծացնելու եւ այնտեղ տեղավորելու մասին: Անօրեն հարստություն, բերք չէ ստացածը, չէ՞, չի ասվում, որ ունեցվածքն անօրեն էր, ինչպես Չակքետս մաքսավորինը: Աստված ասում է. «Անմիտ մարդ, այս գիշեր հոգիդ առնելու եմ»: Միևնույն ժամանակում էր, որ միևնույն կյանքի վերջ պիտի վայելեր իր ունեցածը: Բայց կարելի էր մարդկանց ողորմություն անել, սովածներին կերակրել... Եվ ի՞նչ եղավ. մարդն ամեն բան կորցրեց:

Մենք՝ հավատացյալներս էլ հաճախ այդպես ենք ապրում. վաղը կհասցնենք, կանենք: Ո՛չ, այդպես չէ: Մեր սրբերը, մեծերը մեզ պատգամել են. «Այսօր քո վերջին օրն է»: Աղոյթը, եթե Աստված այսօր հոգիս առնի, Նրա առաջ պատրաստ եմ կանգնել: Հասցրե՛լ եմ ներել նրանց, ովքեր ինձ վատություն են արել, հաշտվել նրանց հետ, որոնց ես նեղացրել եմ: Շատ դժվար բան է, շատ-շատ, որովհետեւ ամեն ինչ փոխվում է, երբ կանգնում



ես մահվան առջեւ՝ զատվում է կարեւորն անկարեւորից, երկրորդականը՝ առաջնայինից, հավիտենականը՝ ժամանակավորից: Այդ պահին ի հայտ է գալիս քո կյանքի ինչ լինելը: Հիշեցի մի ծերունու. հավատացյալ մարդ էր: Այնպես մաքուր, մանկական աղոթք էր անում, որ լսելիս միշտ հուզվում էի: Հիսուսին դիմում էր այսպես՝ Տեր իմ ջան: Երագում էր Սուրբ Գրքը կարդալով մեռնել: Այդպես էլ եղավ: Նա մեզնից մեկն էր, անկատար մի էակ, բայց Աստծուն շատ էր սիրում: Նաեւ հիշենք, թե ինչպես էին աղոթում մեր հայրերը. նրանք Աստծուն խնդրում էին մահվան օրը միշտ իրենք իրենց աչքի առջեւ ունենալու շնորհ տալ:

- Տե՛ր հայր, քանի որ մահը կարող է մեզ «այցի գալ» ամեն վայրկյան, մենք պետք է միշտ սպասենք նրան: Այսպիսի արտահայտություն կա. «Մահվան հետ հաշտ ապրել»: Ինչպե՞ս հասկանալ, ի՞նչ ասել է «մահվան հետ հաշտ ապրել»:

- «Մահվան հետ հաշտ ապրել» նշանակում է գիտակցել նրա անխուսափելիությունը (վախեցողն էլ է գիտակցում դա), նշանակում է Քրիստոսի հետ հաշտ լինել, ձգտել ապրել Քրիստոսի պատվիրաններով, Նրան սիրելով, ընկնելով, վեր կենալով: Սբ Պողոս առաքյալն ասում է. «Չեմ ասում հասել եմ, այլ ճանապարհին եմ» (տե՛ս Փիլ. Գ 12, 13): Կարելի էր այդ ճանապարհին լինել եւ, կարելի էր չէ՛ դանդաղ եւ քայլում թե արագ, դա ուրիշ խնդիր է, բայց միշտ այդ ճանապարհին լինել, միշտ հայացքը Քրիստոսին հառած լինել: Ի՞նչ օգուտ ունի մարդը, եթե ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի (տե՛ս Մատթ. ԺԶ 26):

Շարունակությունը՝ էջ 8



Սկիզբը՝ էջ 3

Բնույթով լինելով գտարյուն բանաստեղծ՝ Շիրազը մեկ անգամ չէ, որ ծրագրային խորհրդածություններում պաշտպանում է մաքուր քնարերգությունը, որի հիմնական բաղադրիչներն է համարում խիղճն ու բարոյությունը, կարեկցանքն ու գուրբը: Պոեզիայի հավերժականության չափանիշը, ըստ Նրա, որոշվում է զգացմունքայնությամբ. «Երգը քար սրտից թե արցունք բամեց՝ եվ նորարար ես, ով պոետ, եւ մեծ»: Այս ասելով՝ պոեզիայի գերագույն խնդիրը Շիրազը համարում էր մարդկային խիղճն արթուն պահելու կարողությունը եւ իրեն բնութագրում այսպես. «Ես դարի սիրտն եմ, ես շեփորը չեմ...»: Ներքին բանավեճը Չարենցի հետ ակնհայտ է. «...ժամանակիդ շունչը դարձիր» - «Ես շեփորը չեմ», «Ես դարի սիրտն եմ» - գուրբ եւ զգացմունք:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ...

Շիրազը հավերժական արժեքի խնդիր բանաստեղծ է: Այս դեպքում արդեն առանց ներքին բանավեճի Չարենցի նման նա եւս իր մասին այսպես էր ասում. «Բոլոր դարերն իմ հոգում... Ես պոետն եմ դարերի»: Այդպիսին է նաեւ ինքնաբնութագրական մեկ այլ պատկեր. «Ես բանաստեղծ եմ, հավերժի որդին, երկինքը մայրս է, երկիրը՝ հայրս»: Տող առ տող Հ. Շիրազը բնութագրում է բանաստեղծին եւ կերպավորում նրան՝ ըստ իր պատկերացման: «Բանաստեղծը ծնվում է...» գործում նա այն կարծիքի է, որ ճշմարիտ գրողի համար հին ու նոր չկա, որ ճշմարիտ գրողը միշտ պիտի իր դարից բարձր լինի: Այնուհետեւ՝ «Բանաստեղծը երկրի արքան է միակ՝ Թեկուզ անթագ, անբանակ: Բանաստեղծը՝ մշտնապես մոմն ազգային, Կերոնս՝ համամարդկային»: Բանաստեղծի կերպարն աստիճանաբար վերաճում դառնում է համամարդկային ապրումների մի խտացում, որ իրենով արտացոլում է աշխարհի ու մարդկության բախտը: Դրա արտահայտությունը «Ինքներգանք համամարդկային» պոեմն է, որն ինքն անվանել է քնարական էպոս: Բանաստեղծի կերպարը պոեմում իրենով խորհրդանշում է աշխարհն ու մարդկությունը. «Տիեզերքում, ո՛վ բանաստեղծ, տիեզերք ես մի բուն»:

Հ. Շիրազը հոգեւոր եւ ստեղծագործական ամուր թելերով կապված էր ժողովրդի կյանքին ու մտածողությանը: Դա էլ նրան դարձրեց հիրավի ամենաժողովրդական բանաստեղծը: Ժողովրդին նվիրվածությամբ ու նրա կենսափոխությանն ունեցած հավատարմությամբ էլ Հ. Շիրազն ապրեց իր ամբողջ ստեղծագործական կյանքը:

Քերթողական արվեստի վերաբերյալ ունեցած խորհրդածությունների եւ, առաջին հերթին, սեփական գրական նախասիրությունների բացահայտման մանրամասնորեն մշակված մի ծրագիր է առկա նաեւ Հ. Սահյանի պոեզիայում: Ի՞նչ է բանաստեղծությունը հարցին նա պատասխանում է. «Բանաստեղծությունն այդ սրբագործված, ինձանից պոկված իմ էությունն է... Այդ իմ մեջ փրկված ազնիվն ու բարին, իմ լացով կնքված անմեղությունն է» («Բանաստեղծություն»):

Հ. Սահյանը եւս որպես ստեղծագործող իրեն տեսնում է հավերժական ժամանակների շրջապտույտի ու շարունակության մեջ («Ուտիս տակ մի մեծ սար է սարսռում»):

Տիեզերքի հետ խառնվել այսպես, - Իրար խառնելով դարերն ու տարին, Տիեզերքով մեկ հաստատում եմ ես Հավիտենությունն ակնթարթային:

Հավերժականը, որի գոյության հիմնական գրավականը, ըստ Հ. Սահյանի, բնությունն է, իրենով պայմանավորում է նաեւ բանաստեղծության ձեւն ու ոգին, կշռույթն ու շարժումը: Տարբեր գործերում բանաստեղծը մի առանձնահատուկ հետեւողականությամբ է շարադրում ժողովրդական երգի պես պարզ ու անաճույճ իր երգի տեսությունը: «Ես ուրիշ տեղ չկամ» բանաստեղծության մեջ նա ասում է, որ իր երգերում չկա զարդ ու զարդարանք, որ այդ երգը պարզ ու անշուք, նախնական է անգամ, որ այդ երգի տունը հայրական տանն է նման: Երգի պարզ ու նախնական հիմքերը հաստատելու համար բանաստեղծն անընդհատ անդրադարձով վկայակոչում է բնության երեւույթները: Երկնքի չվող հավքերին նայելով եւ զգալով, որ նոր է նրանց կանչն ու երթը, նա նաեւ հաճելի զարմանք է հայտնում, թե ինչպես այսքան ժամանակ ոչ քամին, ոչ էլ անձրեւը չխախտեցին «երամի հին-դասական ձեւը» («Վի, երկնքի չվող հավքեր»): Հ. Սահյանն ուզում է ասել, որ նոր շեշտն ու շունչը եւս կարող են չբանդել պոեզիայի հին-դասական ձեւը, որի պաշտպանն ու պահպանն է նա:

Շարունակությունը՝ էջ 7

ՓԱՐԵԳԻՆ ՆԺՂԵՎԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵՎՆ...

Սկիզբը՝ էջ 4

Մանաանդ որ, այդպես մտա-ծող ու ներկայացնողները Գ. Նժդե-հի՝ հրապարակի վրայ եղած ամ-բողջ ժառանգության մեջ, վերոյի-շեալ մտքերից բացի, մի երկրորդ նման միտք չեն կարող վկայակո-չել՝ չարչրկելու համար:

«Յեթանոս հայի քաջությունը չը տկարացաւ նաեւ քրիստոնէական Յայաստանում: Սխրագործելու իր տենչանքին զուգահեռ՝ դա ընդու-նեց արտայայտման մի նոր ձեւ եւս՝ նահատակությունը կամաւոր, որն իր խորքում ոչ այլ ինչ է, բայց եթէ՝ գիտակցական մահումս բա-ջաբար անմահանալու ձգտումը»:

«Եկեղեցին: Դա վերագնահա-տումի պիտի ենթարկէ քրիստո-նէական սիրոյ իր սխալ ըմբռնու-մը, որպէսզի դադարի թուլութիւնը առաքինութիւն համարել եւ սպա-նել մեր ժողովրդի կամքը... Սիրում է նա, ով ուժեղ է... Զրիստոսը սի-րում էր, որովհետեւ ուժեղ էր... Նա սիրում էր, որովհետեւ սիրելու եւ ներելու չափ հզօր էր: Նրա անձ-նական կեանքը պիտի դառնա Ե-կեղեցուն ուղեցոյց: Նրա մահան խորհուրդը - հերոսական զոհաբե-րություն: Նա զոհաբերուեց, որով-հետեւ գաղափարի հերոս էր...»

Քրիստոնեան նա՝ չէ, ով քրիս-տոնէական վարդապետութեան տարերքը սխալ է հասկացել, ըն-կել նախապաշարումների ցանցի մէջ եւ տկարացել կորչելու աստի-ճան, այլ նա, ում մէջ մի քիչ քրիս-տոսութիւն կայ - մի կայծ ամենաի-զօր Աստուածամարդու հոգուց:

Նա ամենակարողն էր, ամե-նահզօր - մենք առնուազն կարող եւ հզօր պիտի լինինք, որպէսզի կարողանանք սիրել եւ զոհաբե-րել: (Բաց նամակներ հայ մտաւո-րականության, Պէյրուս, 1929, էջ 21-22, աղաւաղումներով ու բազ-մաթիւ վրիպակներով արտատ-պուած է՝ Գ. Նժդեհ, Երկեր, հտ. 1, էջ 125):

«Հայրենիք, երկիւղած սեր եւ յարգանք դէպի... մեր կրօնը, որ ցեղի սիրուն է, դէպի մայրենի լե-զուն, որ հայրենասիրութեան թթմորն է...» (Որդիների պայքա-րը հայրերի դէմ, Սոֆիա, 1927, ար-տատպուած է՝ Գ. Նժդեհ, Երկեր, հտ. 1, էջ 85):

«Այո՛, ոգու ժողովուրդ ենք, եւ այդ իսկ պատճառով այն բոլոր վարդապետութիւնները, որոնք դի-մագուրկ ոգու ծնունդ են... մնում են անմարսելի եւ անհարագատ հայ հոգու համար: Ոգեշունչ էր քրիստոնէութիւնը, եւ հենց այդ է պատճառը, որ նրա գիրկը նետ-ւողներէն առաջինը եղաւ հայը» (Յեղի յաւիտենական գէւքը, «Տա-րակի Արծիւ» ամսագիր, Սոֆիա, 1938, թիւ 1-2, գետեղված է՝ Գ. Նժ-դեհ, Երկեր, հտ. 1, էջ 391):

«Բաներ կան, որոնք յաւիտե-ական պաշտելի են - Աստուած, Հայրենիք, Մայր - որոնք մասին մարդ արարածը, եթէ հոգեպէս խաթարուած չէ, չի կարող առանց կրօնական յարգանքի խօսել» (Բաց նամակ Սայքլ Արլենին, Գ. Նժդեհ, Երկեր, հտ. 1, էր., 2002 թ., էջ 332):

«Տարօնականութիւնը... դա հայ ռազմիկի գործն է, որ յաղթա-կան եղաւ, որովհետեւ հայ եկեղե-ցի՛ն օրինեց նրան» (Զօրավար Գարեգին Նժդեհը Տարօնականու-թեան մասին, Գ. Նժդեհ, Երկեր, հտ. 1, էջ 414):

«Նախաձկանների յաղթական արիութիւնն էր, որ Նագովրեցու վարդապետութիւնը պարտադրեց բարբարոսներին» (Հայ դասական արիութիւնը, Գ. Նժդեհ, Երկեր, հտ. 1, էջ 329):

«...Նագովրեցու մեծութիւնը նրա մէջ չէ, որ պատմութեան մէջ մի քանի փաստեր թողեց, այլ որ զգայապաշտ մարդկութեան նոր իտեալներ տուաւ եւ մի այլ աշխար-հի կարօտով հոգիները վառեց» (Յեղի ոգու շարժը (տե՛ս «Խորի-րդածութիւններ 337 40-ամեակի առթիւ» հատուածը), Սոֆիա, 1932, Գ. Նժդեհ, Երկեր, հտ. 1, էջ 139):

«Որի՞ն հետեւել - ահա՛ հարցե-րից ամենաճակատագրականը, ո-րի՞ն - Նագովրեցո՞ւն, թե՛ Բիկնե-րին, Էմերսոնի՞ն, թե՛ Մարքսին, Մամիկոնեանների՞ն, թե՛ հայ մտաւորականութեան քաղաքա-կանապէս անկապաշտ մասին: Ա-ռաջինները - ոգու հսկաներ քո մէջ կը ապրեցնեն աստուածայինը, վերջինները, մարդկօրէն անաս-նականը. առաջինները քո մէջ կը մշակեն իդէալիստը, ասպետը, հե-րոսը, վերջինները՝ գորտի հոգով

առօրեապաշտ պաղ մահկանա-ցուն (Ժողովուրդ եւ առաջնորդ, Գ. Նժդեհ, Երկեր, հտ. 1, էջ 432):

«Իմ հոգին զոյգ յենարաններ ունի - Աստուած եւ Հայրենիք» (Հայ-րենիք, Խորհրդածութիւններ, Գ. Նժ-դեհ, Երկեր, հտ. 1, էջ 430):

«Վերացնելով մահուան ու կեանքի միջեւ գոյութիւն ունեցող անջրպետը, Նագովրեցին ժխտեց մահը, որովհետեւ հանդիսացաւ յաւիտենական սերմացանը ոգու հսկաների՝ սուրբերի, նահատակ-ների, հերոսների» (Յերոսը եւ հե-րոսականը, Գ. Նժդեհ, Երկեր, հտ. 1, էջ 485):

«Մեռնում է բոլշեւիզմը, որով-հետեւ ապրել են ուզում երրոպա-կան քաղաքակրթութիւնը, քրիս-տոնէութիւնը եւ մարդկային անու-նը» (Պատմութեան դատաստանը, Գ. Նժդեհ, Երկեր, հտ. 1, էջ 475):

«Աններելի սխալ է կրօնական կրքով բացատրել հայու հաւա-տարմութիւնը քրիստոնէութեան հանդէպ... Տիրապետող գիտակ-ցութիւնը հայու մէջ վաղուց է, ինչ ազգային է, եւ ո՛չ կրօնականը, ...նա շատ վաղուց հայացրեց քրիստոնէութիւնը» (Բանտային գրառումներ, Գ. Նժդեհ, Երկեր, հտ. 1, էջ 259):

«Սրբացնելով ու յաւերժացնե-լով Մամիկոնեանների ուխտը՝ Ե-կեղեցին մեր ժողովրդին տուած է ինքնապաշտպանութեան գէւքե-րից ամենահատուն ու յաղթկանը - «մահ գիտեցեալ»-ը (Ինչո՞ւ՝ Տա-րօնականութիւն, Գ. Նժդեհ, Երկեր, հտ. 1, էջ 402):

Այս ամենին անհրաժեշտ է յա-ւելել նաեւ այն իրողութիւնը, որ Գարեգին Նժդեհն իր ամբողջ կեանքում որեւէ կարեւոր գործ չի սկսել կամ ձեռնարկել՝ առանց Աստուծոյ անուը տալու: Նրա բոլոր արշաւանքներն սկսուել են եկեղե-ցուց կամ աղօթքով: Նա եկեղեցի-ներում է անցկացրել նաեւ Սիւնի-քի (1920 թ., դեկտեմբերի 25) եւ Լեռնահայաստանի (1921 թ., ապ-րիլի 26) հանրապետութիւնների հիմնադիր համագումարները: Իր գէւքերը, նոյնիսկ սպարապետա-կան գօտին, օծուել են եկեղեցում: Իր զինուորներին յղած գրեթէ բոլոր հրամաններն ու կոչերն աւարտ-ւում են Աստուած կանչելով. «Մեզ հետ Աստուած եւ Դաւիթ Բեգի վրի-



ժակ հոգին, Մեզ հետ Աստուած եւ մեր մեծ հայրորդիները... անհան-գիստ հոգիները» , «Աստուած եւ իմ սերը քեզ հետ» եւ այլն (տե՛ս Գ. Նժդեհի 1919-1920 թթ. հրամաննե-րը եւ կոչերը զանգեզուրցիներին, Գ. Նժդեհ, Խուստուկեան կանչեր, Գորիս, 1921 թ., արտատպութի-ւնը՝ Գ. Նժդեհ, Հասընսիր, Եր., 2006 թ., էջ 418-426):

1943 թ. հայ ռազմագերիների հետ հանդիպումների ժամանակ նրանց ասում էր. «Մեր հայրենիքի բախտի համար ես բռնել եմ Աստ-ծու փէշից, դուք էլ բռնեք ինձա-նից» (Վ. Սարգսեանի յուշերը Գ. Նժդեհի մասին, «Նախիջեւան» ամսաթիւթը, 2001 թ., թիւ 19, էջ 11):


«Ինքնակենսագրական»-ում (1944 թ.) գրում է. «Եղել եմ խորը հաւատքի եւ ետիկայի մարդ... Հա-ւատքի եւ պաշտամունքի տաճա-րում միշտ էլ առաջին տեղերը յատկացուած են եղել Աստուծոյ եւ Հայրենիքի: Հայաստանն է եղել երկրաւոր (յատուկ է շեշտում «երկրաւոր» բառը - Ռ. Յ.) սրբազ-նագոյն ինձ համար»:

Վերոյիշեալ ու բազմաթիւ այլ իրողութիւնները նկատի առնելով՝ անժխտելի է, որ 20-րդ դարի հա-յոց մեծագոյն պատգամախօսի գաղափարախօսութեան մեկնա-կետը հայոց քրիստոնէականն է, ո-րով այն հիմնաւորապէս տարբեր-ւում է 1920-30-ական թթ. Խոսա-լիայում ու Գերմանիայում, այնու-հետեւ աշխարհի այլ երկրներում տարածում գտած ցեղամոլ ֆաշա-կանութիւնից: Ֆաշերի գաղափա-րաբանութեան հիմքը Նիցշէի ի-մաստասիրութիւնն էր: Նիցշէի «Իմ մեծութեան արձանը պիտի ցցուի փլատակներից եւ դիակնե-

րից կազմուած մի լեռան վրայ» ա-տոյթի առիթով Գ. Նժդեհը նրան ա-նուանում էր «հոգեհիւանը»: Այս-պիսով՝ անվիճելի իրողութիւն է, որ Գարեգին Նժդեհի սկզբնաւորած ցեղակրօնութիւնը՝ իբրեւ զուտ հայկական իւրայատուկ գաղա-փարաբանութիւն, հիմնաւորապէս տարբերում է 1919 թ. վերջերին Խ-տալիայում եւ Գերմանիայում սկզբնաւորուած, իսկ 1922 թ. Ի-տալիայում (Մուսսոլինի), ապա 1933 թ. Գերմանիայում (Հիթլեր) իշխանութեան եկած ֆաշական-ներից տարածում գտած ցեղամոլ յարձակողական այլամերժութի-ւնից: Ֆաշերի համար քրիստոնէու-թիւնը ժխտելի ու անընդունելի էր, մինչդեռ 20-րդ դարի հայոց մեծա-գոյն պատգամախօսի գաղափա-րախօսութեան մեկնակետը ցեղա-պաշտութիւնն էր, որն այլամերժ ֆաշականութիւնից յատկապէս տարբերում ու առանձնանում է հայոց քրիստոնէականի վրայ հիմ-նուած ինքնապաշտպանական եութեամբ:

Յայտնի է, որ Գարեգին Նժդե-հի ռազմական գործունեութիւնը Հայաստանում տեւել է 1914 թ. հոկտեմբերից (աւելի ստոյգ՝ 1915 թ. մայիսից) մինչեւ 1921 թ. յուլիսը: Մինչդեռ յետագայ իր ամբողջ կեանքում՝ 1921 թ. յուլիսից մինչեւ իր 1955 թ. նահատակութիւնն ու վկայաբանութիւնը բոլշեւիկեան բանտում, աւելի քան 34 տարի, նա բացառապէս զբաղուել է հայոց ազգային գաղափարաբանու-թեամբ, մնացել ցեղակրօնութեան ու տարօնականութեան գաղա-փարների կրողն ու մունետիկը՝ նե-րառեալ 1944-1955 թթ. բանտում գրած աշխատութիւնները, նա-մակներն ու հարցաքննութիւնների պատասխանները: Երբ նրա կեանքի վերջին աւելի քան 30 տա-րուայ գաղափարական աշխա-տանքը յայտարարում է «ժամա-նակաւոր մոլորութիւն», կնշանա-կի նրա գործերի գործ հայոց 4500-ամեայ ազգային գաղափարաբա-նութեան յայտնաբերումը, վերա-կանգնումը, զօրացում-արդիացու-մը եւ շանգեզուրում գործադրելը հաւասարեցում է գրոյի: Սրանից աւելի վարկաբեցիչ յերիւրանք ո-րեւէ մէկը չի տարածել Հայոց ազ-գային գաղափարաբանութիւնը վերականգնած գաղափարատու սրբութեան հասցէին:

Ռաֆայէլ ՋԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ
Պատմական գիտ. թէկնածու



Մերգեյ Բագրատեւի առաջարկած այբուբենը

Սկիզբը՝ էջ 4

Մէկ տարի անց՝ 1941 թ. ապ-րիլի 24-ին, նոյն մտահոգութիւն-ներով Հայաստանի Կոմկուսի Կենտրոնի քարտուղարին դի-մում է նշանաւոր հայագէտ Ստ. Լիսիցեանը եւ, սակայն, մնում է անպատասխան: Երբ Երկրորդ աշխարհամարտի ծանր տարի-ները ետեւում էին, 1944 թ. յուլի-սի 3-ին պրոֆ. Լիսիցեանը նոյն գրութիւնը յղում է նոր մի քա-րտուղարի. պատասխանը մեզ յայտնի չէ: Այստեղ մէջ բերեք նամակագրի առաջարկութիւն-

ները, որ համաձայն են Խ. Սարգ-սեանի դրոյթներին.

«1. Ընդունուած էի, էիր, էր... չէի, չէիր, չէր բայաձեւերի գրու-թեան հետեւողութեամբ գրել նոյն օժանդակ բայաձեւերով ա-ծանցուած (կը) գրեի, (կը) գրէիր, (կը) գրէր... (կը) խոսէիր, (կը) խո-սէր բայի ստորադասական եւ ըղ-ձական եղանակների ձեւերը:

2. Օրենք) բառի տրամաբա-նական հետեւողութեամբ - գրել համառօրէն, դանդաղօրէն եւ նման մակբայական ձեւերը:

3. Ե գրել ոչ միայն բառասկզ-

ՄԵՆՔ ԵՒ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ...

բում, այլ եւ բառավերջում եւ բա-ռամիջին ձայնաւորից առաջ, խուսափելու համար այսպիսի գրութիւններից - թե՛ն, թոպեա-կան, քվեարկութիւն, հրեք, Լեռ, մանաւանդ էա, եօ (եօ) գրախմ-բերը վերականգնելուց յետոյ: Ու-րեմս՝ թոպէ - թոպեական, քվէ - քվեարկութեան, հրեա - հրեից, Էոյիա, Լեռ, Գեորգ (եւ Գեորգ), Մատթէոս (եւ Մատթէոս):

4. Խոյս տալ հօգուտ, համե-նայն դէպս եւ նման գրութիւննե-րից, որտեղ գրաբարի նախդիր ի-ից ծագած յ-ն թանձրացած է մին-չեւ հ, եւ բառի արմատն աղա-ւաղում է՝ շփոթուելով հոգի, համ արմատների հետ, եւ գերադասել պարզօրէն առանց յ-ի գրութիւնը - օգուտ ձեր, ամենայն դէպս:

5. Վերանայելով բոլոր այն բառերը, որոնք գրաբարի մէջ սկզբում ունեն յ, այդ յ-ն գեղչել բոլոր այն դէպքերում, երբ գի-տակցութիւնը որոշակի ջոկում է բառի արմատը, ինչպէս այդ ընդ-գծում է մանաւանդ կենդանի խօսակցութեան մէջ. անկարծ (ոչ հանկարծ), աշողութիւն (ոչ հաշո-ղութիւն), որը համադրում է

հաշել - հաշել բառի հետ (աշո-ղակ, բարի աշողում), ետ զնալ (ոչ հետ զնալ, որտեղ շփոթում է հետ վերջադիրի հետ - նրա հետ), ետանալ, ետաղծ, ետածգել, Ե-տին մարդ, կեսօրից ետո, ինչպէս այլ եւս չենք գրում՝ յառաջ զնալ, յառաջաբան, յառաջադէմ, յառա-ջախաղաց, յառաջակա, յերկուա-նալ» (Ստ. Լիսիցեան, Մէկ այբու-բեն - երկու ուղղագրութիւն, 33 ԱԱ, ֆ. 428, ց. 2, գ. 83, էջ 8-9):

Նկատելք, որ մասնաւորա-պէս հինգերորդ կետով նախա-պատուութիւնը տրւում էր չարեաց փոքրագոյնին. հանկարծ գրելու փոխարէն առաջարկում է գրել անկարծ, որովհետեւ յ/ի/ նախդի-րը հ-ով փոխարինելն անդունդ է առաջացրել հազարամեայ ուղ-ղագրական աւանդութեան եւ նոր գրութեան միջեւ, եւ բառը դարձել է անճանաչելի:

Ստ. Լիսիցեանը համոզուած է, որ «վերականգնելով այբուբե-նի միասնութիւնը՝ կը լցուի այն վիճիկ հին (նախասովետական) եւ նոր գրականութեան միջեւ, որի վրայով չի կարողանում թռչել նոր գրութեան ձեւերին ընտելա-

ցած գրաճանաչ հայը. մի ամբողջ մեծ եւ յաճախակի շատ արժեքա-ւոր գրական արտադրութիւն մնում է նրա համար դժուարա-մատչելի եւ մի նոր գրական ստեղծագործութեան համար ան-գործադրելի» (անդ, էջ 9):

Այս եւ մնացած բոլոր առա-ջարկութիւնները կարծես մօտ էին ընդունւելու 1940 - 41- ին, եւ սկսուած աշխարհամարտը խա-ղաց իր վճռական դերը: Յետպա-տերազմեան իրադրութիւնն ար-դէն այլ էր, աւելացել էին առօ-րեայ հոգսերը, նոյնիսկ «համաշ-խարհային յեղափոխութեան» պահանջները առժամանակ տե-ղը զիջել էին աւելի կենսական հանգամանքների: Եւ հարցը մնաց թերաւարտ:

Այժմ կարող ենք շրջափոխե-լով կրտաշէս Աբեղեանի խօսքը՝ ասել. մակնիցեանական ուղղագ-րութեան լուծը եւ անեծքը մինչեւ օրս ծանրացած է մեզ վրայ: Պատմական մի բեռ, խարան՝ ճակատագրուած յանուն «Հա-մաշխարհային յեղափոխու-թեան»...

Նունե ԽՈՐՀԱՎԵՐԴԵԱՆ

Օրերս կյանքից հեռացավ ժամանակակից հայկական կերպարվեստի տաղանդաշատ ներկայացուցիչ, գեղանկարիչ, գրաֆիկ, արվեստաբանական գիտությունների թեկնածու, հայկական միջնադարյան արվեստի՝ մանրանկարչության եւ որմանկարի հմուտ ու խորաթափանց մասնագետ, բազում ուսումնասիրությունների ու մենագրությունների հեղինակ, Գիտությունների ազգային ակադեմիայի Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող Նիկոլայ Զոթանյանը:



Նիկոլայ Գաբրելի Զոթանյանը ծնվել է 1928 թ. Գանձակում: 1946 թ. ավարտել է Երեւանի Ժ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը, 1952-ին՝ Գեղարվեստաթատերական ինստիտուտը, ապա կրթությունը շարունակել է Լենինգրադի Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության եւ ճարտարապետության ինստիտուտի ասպիրանտուրայում:

Դեռեւս Երեւանում, ուսանելով ժամանակի ամենաինքնատիպ ու քանքարաշատ նկարիչ Վահրամ Գալֆեյանին, Զոթանյանը հասցրել էր խորանալ ոչ միայն ակադեմիական նկարի բոլոր նրբությունների մեջ, այլեւ հրաշալի յուրացնել իմպրեսիոնիզմի եւ վերացական գեղանկարի լավագույն հիմնարկը:


Ժեները եւ որպէս գեղանկարիչ՝ հասնել այնպիսի մի որակի, որով կարող էր անվարան շարունակել իր ստեղծագործական կյանքը՝ վստահաբար նաեւ զատորոշման իր առիթնող կնիքով, ժամանակին բնորոշ «ընթեռնելի» ձեռագրով: Սակայն այդ ճանապարհը բավարարում էր բերելու պատկերակերտության մերօրյա ընկալումներին ու չափանիշներին, սակայն ոչ Զոթանյանի նկարչի ստեղծագործական բուն անհատականությանը, նրա՝ աշխարհը տեսնելու, աշխարհի մեջ իր եւսը դրսևորելու, արտահայտելու ներքին մղումին, ներքին ազատությանը:

Մեղք գործած չենք լինի, եթե

փանց արվեստաբան՝ երբեք թույլ չտվեց ուրիշներին արտագանդելու իր արվեստը. նրան խորթ էր կոմբոցիոն արվեստաբանությունը, եթե կարելի է ասել, նորարարական գործերը հենց այս բարձրակետին հասնելու վկայություններ են, ուր գույնն ու ձևը ոչ թե վերարտադրում, կերպավորում են իրն ու առարկան, այլ խաղարկվում են որպէս գեղարվեստական ինքնատիպ միջոցներ՝ իր աշխարհագրողությունը, երկրային ու վերերկրային ընկալումների իրոքայնությունը լավագույնս արտահայտելու համար: Նկարչի կտավներում գունային ողջ կառույցն ասես կլանում, իր մեջ է

վերգետնյա կանաչ ծիր: Դրանք մեկ միասնական օրգանիզմ են, կերպավորման խնդրի լուծման հավասարազոր թելեր:


Հիրավի, Զոթանյանն այն արվեստագետն էր, ում տրված էր ոչ միայն շրջակա միջավայրը, իրեն ու առարկաները յուրովի տեսնելու, երեւոյթները յուրովի ընկալելու եւ մարմնավորելու շնորհը, այլեւ ընդունված գեղարվեստական ավանդույթների դարավոր պատնէշները «սրբագրելու» հանդգնությունը: Դա հավասարազոր էր հերոսության, մանավանդ եթե ի նկատի ունենանք այն պարագան, որ նրա ստեղծագործական կյանքի



ՆԱ ՀԱՄԱՎ ԱՐՎԵՍՏԻ ՈԳԵՂԵՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻՆ

ասենք, որ նրա ստեղծագործական կյանքում բեկումնային դեր խաղաց հայկական միջնադարյան գեղանկարչությամբ եւ որմանկարչությամբ լրջորեն զբաղվելը (նրա ուսումնասիրությունների արդյունքն են «Գույնը Հայաստանի վաղմիջնադարյան գեղանկարչությունում», «Էջմիածնի Ավետարանը», «Հայաստանի վաղմիջնադարյան որմանկարչության հուշարձանները», «Արուծի որմանկարը», «Անիի Տիգրան Զոնեցի կառուցած Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու որմանկարները», «Շիրուբի Ավետարանը» սքանչելի գրքերը): Միջնադարի վարպետների գունային կառույցի յուրահատուկ արտահայտչականությունը, գունային թույլների միանգամայն իմաստավորված անցումները, գույնը՝ որպէս հիմնականույց կիրառելու հմտությունը, կոմպոզիցիայում գույնի եւ ծավալածեւի իմաստային ներդաշնությունը Զոթանյանին մղեցին նորովի ու յուրովի նայելու ժամանակի վրա արվեստի ոգեղենության հաղթանակին, արվեստի ուժի այն բարձունքին, որի ներքին հզորությունն անհամեմատելի է նույնիսկ ժամանակակից տեխնիկական ուզածո գործող միջոցի հետ:

Զոթանյանի՝ իրապես քչերին ծանոթ (լինելով նաեւ խորաթա-



տարրալուծում ակտիվ գիծը՝ պատկերի ծավալածեւային ամբողջականությանը հաղորդելով այն էներգիան, որը խորքից ժայթքելով՝ ողողում է ողջ մակերեսը՝ այն վերածելով տարածական յուրօրինակ կառույցի: Նրա գործերում ֆունը ոչ թե պասիվ գործն է՝ պատկերը, իրն ու առարկան ընդգծելու համար, այլ դրանք հավասարազոր միջավայր, ինչպէս օրինակ՝ սոխի ստորգետնյա հատվածը՝ հողի ֆակտուրան, սոխուկի շերտափաթաթուկն ու արմատաթելիկները ոչ պակաս գրավիչ են կերպավորման առումով, քան



գերակշիռ մասն անցել էր սոցաեալիզմի տարիներին, երբ նոր ու նորովի արտահայտվելը, ազատ ու անկաշկանո մտածողությունը երկրպագության էր հավասարազոր: Չէ՞ որ հոգեմտավոր ազատությունը ենթադրում է անհատի գիտակցության կառույցի փոփոխություն, այսինքն՝ ներքին հեղափոխություն, որի անդրադարձը նույնիսկ արվեստում առնվազն կարող էր համարվել հանդգնություն, եթե ոչ ավելին: Իսկ այդ նորով առաջնորդվելու եւ ապելու, առավել եւս ստեղծագործելու համար պահանջվում էր համապատասխան միջավայր, համապատասխան ընկալունակություն:

Թերեւս դա է պատճառը, որ նրա արվեստի լեզուն, ասելիքի ուղղվածությունը, ինքնարտահայտման անսովոր կերպը շատերի համար կարող է անըմբռնելի թվալ:

Այնուհանդերձ, անհնար է անտարբեր անցնել Նիկոլայ Զոթանյանի գունանկարների կողքով. դրանք միայն չեն գերում, չեն գրավում անսքող սեթետեթանքներով, ճկուն ու սլացիկ ձեւերով, գունեղանակների վարպետ ներկում-տեղադրումով. դրանք անակնկալի են բերում հրաքի ընդերքածին շերտությամբ, գույնի ու ծավալի ետեւում թաքցված սիմֆոնիայով, մակերեսներ-

րի տարակեղեւ, ասես, նկարչական ավարտուն մի պատշաճ վրա մեկ այլ պատկերի մշակումներով: Դրանք հրավիրում են ոչ թե ծնվածի գեղեցկությամբ հիանալու, այլ ապրելու երկունքի խորհրդավոր պահը, մասնակից դառնալու մարդկային ճշմարիտ արարչագործության ընթացքին, այն մեծ սիրո արտահայտությանը, որը մղում էր նրան ձեռքը վերցնել վրձինը:

Շարունակությունը՝ էջ 8



Սկիզբը՝ էջ 5

Նույն դասերն են տալիս նաեւ հայրենի սարերն ու ձորերը. «Իմ հեռավոր-հեռու սարահովիտ, Երգս բույրն ունենար սեւահողիդ: Իմ հեռավոր-հեռու սարահովիտ Երգս շունչն ունենար սարահովիտ» («Սարահովիտ»): Ընդհանրապես, բնության ու բանաստեղծության փոխհարաբերությունն առանձնահատուկ տեղ ունի Հ. Սահյանի բանավեպում, որի նախադրյալը բնության ու բանաստեղծության հոգեհարազատությունն է: Նյութական եւ հոգեւոր աշխարհների սահմանագ-

ծերն այս աշխարհում համընկնում են, եւ կարծես քարափը շարունակվում է մարդու մեջ, իսկ մարդու արյունը շրջանառություն է գործում անցնելով քարափի միջով («Քարափի վրա»): Սրանից հետո պիտի որ գրվեր «Դու փոխես տվել» բանաստեղծությունը, որտեղ բնությունը, մարդու կերպարանք առած, ճանաչում է ինքն իրեն եւ փորձում մարդանալ: Միաժամանակ լիարժեքորեն ճանաչելով բնության կյանքը, դառնալով նրա մասը՝ բանաստեղծը բնավ չի պատճենահանում բնությունը, այլ բնության օրենքների

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

իմացությամբ նույն բնության մեջ իր հոգեկան ապրումների համարժեքն է որոնում: Այս դեպքում է, որ վերանում է հին ու նորի սահմանը, եւ Հ. Սահյանը Հ. Շիրազի պես ասում է՝ «Հինն ու նորը ո՞րն է» («Իմ երգածը սա՛ է»): Այստեղից էլ նրա հոգեպահանջը, ըստ որի՝ բանաստեղծությունը պիտի լինի «միակտուր», միասնական եւ ստեղծվի «ինքնեկ» տողերով:

Հ. Սահյանը բնույթով մեղմ ու խաղաղ քնարերգու է, բնաշխարհի երգիչ: Բայց եւ նա բնավ չի բացառում քաղաքացիական մարտաշունչ պոեզիան: «Մեզ հավասարապես Հարկավոր են հիմա Մեծարենցյան սրիկը Եվ չարենցյան շեփոր», - գրում է նա («Բանաստեղծները նորեկ»): Սա նշանակում է, որ, գեղարվեստական մտածողության իր սկզբունքները պաշտպանելով հանդերձ, նա բնավ չէր ժխտում պոեզիայի զարգացման հնարավոր մյուս ուղղությունները:

Ծրագրային պոեզիան հիմնավոր տեղ ունի նաեւ **Գ. Էմինի** («Բանաստեղծի բախտը» շար-

քը), **Վ. Դավթյանի** («Նախերգ»), **Մ. Մարգարյանի** («Իմ սերունդը», «Դու, վեր ելնելիս...», «Առաջին բարեկամ», «Երգ»), **Հ. Հովհաննիսյանի** («Բանաստեղծի ծնունդը», «Ասա ինձ, երգ», «Ճերմակ թուղթ», «Իմ բաղի փեռն», «Հայրենական») գրքերում:

Ավագ սերնդի բանաստեղծներից նոր ժամանակների որոնումներին միանում են **Ն. Չարյանը** («Խոհ արվեստի մասին», «Քնարականներին», «Չրույց մեռած բանաստեղծի հետ», «Այս ի խորոց սրտի») եւ **Գ. Մահարին** («Մակագրություն գրքի վրա», «Մի գրքի վրա», «Չափածոյին», «Մեռած պոետին»): Նրանք նախ պատասխանում են այն հարցին, թե ինչպիսին պիտի լինի ժամանակի պոեզիան՝ քաղաքացիական, թե՞ քնարական: Ն. Չարյանն ու Գ. Էմինն առավել չափով պաշտպանում են առաջինը, մյուսները հակված են սրտահույզ-քնարական պոեզիային: Նրանք խոսում են նաեւ գրական սերունդների անցած ճանապարհի մասին, ավանդույթի վերա-

ծում նրանց փորձը՝ աչքի առաջ ունենալով առաջին հերթին Ե. Չարենցին ու Վ. Մայակովսկուն, խորհրդածում պոեզիայի արդիականության մասին, արծարծում ոչ միայն պոեզիայի քաղաքացիականության, այլեւ բանաստեղծի քաղաքացիական նկարագրի հարցը, քննում գրական միջավայրի բարոյականությունն ու խոսում բանաստեղծի դժվարին կոչման մասին, մշակում արվեստի օրենքի իրենց սկզբունքները: Մի խոսքով՝ ծրագրային պոեզիան լայն խոսակցություն է բացում ժամանակի ու գրականության հարաբերության մասին, ճշտում գրողի տեղն ու դերը ընթացիկ կյանքում: Այս տեսակետից այդ պոեզիան ի մի է բերում բանաստեղծների գեղագիտությունն ու տեսությունը եւ, որպես այդպիսին, կարծես մի անհրաժեշտ նախաբան լինի նրանց գործերի համար:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

ՆԱ ՀԱՄԱՎ ԱՐՎԵՍՏԻ ՈԳԵՂԵՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻՆ



Սկիզբը՝ էջ 7

Նկարիչը հաճախ էր խոստովանում, որ աշխարհում մարդու ստեղծած արժեքներից ամենից շատ սիրում է գեղանկարչությունը: Դա հասկանալի է դառնում, մանավանդ երբ ծանոթ ես նրա՝ հայ միջնադարյան մանրանկարչության մասին ուսումնասիրություններին ես նրա՝ գույնի զար-




մանալի «աշխարհը» վերլուծող-մեկնող գիտաարվեստաբանական աշխատությանը:

Սակայն ոչ պակաս սիրո պայմաններում են ծնվել Զոթանջյան գրաֆիկի, հիմնականում պատկերված են կանայք:

Բնության մեջ ամենաառեղծվածայինը ձնածածկն է: Եթե այն տեսքի ու բուրմունքի իր զարմանալի նրբությամբ ու քնքշությամբ կարող է մրցակից ունենալ, ապա անժխտելիորեն անմրցակից է իր ներքին ուժի, ներքին հզորության ու ջերմության առումով: Դժվար է պատկերացնել, թե ինչ գործությամբ է այդ փոքրիկ ու քնքշու ծաղիկն առաջինը ճեղքում սառած ու կարծրացած հողի կուրծքը:

Երբ դիտում ես Զոթանջյանի՝ կանանց պատկերաշարը, ապրում ես ճիշտ եւ ճիշտ նույն զգացումը. ի՞նչ ուժ է արդյոք շարժում այդքան գեղեցիկ ու նրբագեղ կանանց, որոնք ասես հենց նոր պատռել են բյուրեղի կարծր զանգվածն ու անխաթար վեհու-

թյամբ, խոնարհությամբ ու խոհունությամբ նայում են աշխարհին՝ մայրության ներկա ու ապագա բերկրանքը, խիղճն ու հոգսերն ի մի դրոշմած դեմքերին: Անանուն այս կանայք չունեն ժամանակ, չունեն դասակարգային բաժանումներ, չունեն ազգություն. սրանք արարածներ են, որոնք խավարից լույս են ծնում եւ ատելությունից՝ սեր, ժխտից լռություն են կորզում, իսկ քառսից՝ նորին ու վսեմ ներդաշնությունը: Նրանք ձնածածկի կատարելություն ունեն, ապառաժներին, գրանիտե հանքաշերտերին, սառցաբեկորներին



մարտահրավեր նետած ձնծաղկի: Նրանք մայրության խորհրանիշներ են՝ կուսական, մաքուր, որոնց կենսադեղյուն արարչության ներուժի խորհրդավոր ու անսպառ շտեմարանն է: Այն շտեմարանը, որտեղից սկզբում է եւ ինքը՝ նկարիչը, որտեղից սկիզբ են առնում նրան հուզող խնդիրները՝ գույնը, հարթությունը, ծավալը, հորինվածքային կառույցն ու այս ամենի ամբողջականության ներդաշն օրինաչափությունը: Զոթանջյանական նկարչական արվեստը հար է նման է իր իսկ տեսաբանական ընկալումներին, որոնք ուղղակի զարմանք են պատճառում իրենց կատարելությամբ: Ստեղծագործական ու աշխարհընկալման տեսակ, որը կատարելապես գեր է ոգեշնչման «աճապարությունից», կեղծ ու շինծու գաղափարներից, երեւութականության մեջ աներեւոյթի, կյուբի մեջ հոգեւորի տարանջատումներից:

Զոթանջյանի գրաֆիկական թերթերն իրենց մեջ սքանչելի գեղեցկությամբ կրում-բացահայտում են առարկայի՝ կերպարվեստում առկա «իզմ»-երից ոչ մեկին չենթարկվող նախաստեղծ «մերկությունը»: Արդարեւ, արվեստի ընդունված պայմանական ուղղություններից ոչ մեկով չեն կարող զգեստավորել Զոթանջյանական ո՛չ գեղանկարը եւ ո՛չ էլ գրաֆիկան: Դրանք իսկական կատարելություններ են, ուր մեկ հարթության վրա բերված գույնի ու գծի, ծավալի ու ձևի օրինաչափ ու միաժամանակ անսովոր ներդաշնությունը, մեղեդայնությունն ու ներքին ռիթմի միասնականությունը ստեղծում են մեզ հասկանալի ֆիզիկական բոլոր չափումների երեւութականը:

Նրա գործերին ծանոթ մարդը կարող է անշփոթ զգալ, որ նկար-



չի ստեղծագործական պահերը նման են եղել ճակատամարի, ինչպես ինքն էր ասում, ավարայրյան ճակատամարտի, որի նշանակությունը մեր պատմության մեջ արժեւորվել է հարատեւում է հոգեւորի հաղթանակով: Հուսանք՝ մի օր մեր արվեստասեր հանրությունն առիթ կունենա ներկա գտնվելու նկարչի անհատական ցուցահանդեսին (ցավոք, հետմահու) եւ ըմբռնվելու այն լույսը, այն շերտությունն ու սերը, որով ողողված էր նաեւ Զոթանջյան մարդու ողջ էությունը:

Աստղիկ ՍՏԱՄԲԵՐՅԱՆ



ՄԱՀՎԱՍԲ ԲԱՑՎՈՒՄ ԵՆ ԴՈՒՆԵՐԸ ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՆ...

Սկիզբը՝ էջ 5

Մահվան ընկալումը մեր ժողովրդի մեջ թերի, թյուր է: Ծատ մարդիկ ասում են՝ հանկարծամահ լինեմ, ցավ չքաշեմ, հարազատներիս նեղություն չտամ... Հանկարծամահ լինելը գուցե դրական բան է նրանց համար, ովքեր իրենց կյանքն Աստծո հետ են ապրել: Բայց, ըստ էության, մարդկանց մեծամասնության համար հանկարծամահ լինելը ողբերգություն է, մարդը չի հասցնում իր «պարտքերը փակել»՝ ներել, հաշտվել, իր մեղքերի համար գոջալ, հաղորդություն ստանալ: Ինչքան մարդ է այսօր մահանում առանց Հաղորդության, առանց Զրիստոսի Սբ Մարմնի եւ Արյան հետ առնչվելու: Իսկ այլ դեպքում երկարատե ծանր հիվանդությունը ողորմություն է Աստծո կողմից. Աստված ժամանակ է տալիս մարդուն վերանայելու իր ամբողջ կյանքը:

Ի՞նչ է մեռելների հարությունը: Տեսե՛ք, Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով եւ նմանությամբ: Մարդը եռամաս է՝ ուսի մարմին, միտք, հոգի: Մարմինը մեռնում է, հող է դառնում, մնում են միտքը եւ հոգին: Եվ երբ մարդը կորցնում է մարմինը, իր ամբողջականությունը խախտ-



վում, խաթարվում է: Ուրեմն մեռելների հարությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ այդ ամբողջականության վերականգնումը, եւ այդ վիճակով է, որ մարդը պիտի դատապարտվի կա՛մ հավիտենական տանջանքների, կա՛մ արժանանա հավիտենական կյանքին:

Մեր պետության, ժողովրդի ողբերգական, աղետալի վիճակի պատճառը հոգեւորի բացակայությունն է: Տարիներ շարունակ ես արդեն մկրտություն չեմ անում՝ առանց թեկուզ մեկ փոքրիկ գրույցի: Մարդիկ գալիս են մկրտվելու՝ գաղափար չունենալով, թե

ինչ է հավատը, ով է Զրիստոսը: Այնքան տխուր է այդ վիճակը... Հարցնում եմ՝ Սուրբ Գիրք կարդո՞ւմ եք: Մի կիրթ կին ինձ մի անգամ ասաց. «Իսկ հնարավոր չե՞ առանց կարդալու քրիստոնյա լինել»: Ես հարցրի եւ իմացա, որ նա բժիշկ է: Եվ երբ ասացի, որ ես էլ եմ բժիշկ, բայց գաղափար չունեմ բժշկությունից, զարմացավ: Ասացի՝ ձեր ասածն եմ կրկնում՝ քրիստոնյա եմ, բայց գաղափար չունեմ քրիստոնեությունից:

- «Գերեզմանատունն այնպիսի դպրոց է, որտեղ մեռյալները սովորեցնում են ապրողներին,

համբերը՝ խոսողներին», - ասում է Պողոս Ադրիանուպոլսեցին: Ի՞նչ կարող են սովորեցնել մեզ՝ ողջերս մեռյալները:

- Ամենակարեւոր բանը, որ այս կյանքը վերջավոր է, ժամանակավոր, որ այս կյանքից ոչինչ հետո չես տանի: Ի՞նչ թողեցիր, լույս թողեցիր, թե՞ չթողեցիր: Պատահական չէ, որ Սուրբ Գիրքն ասում է, որ սգո տուն գնալն ավելի լավ է խնջույքի տուն գնալուց (տե՛ս Ժողովող Է 3): Ուրախության տանը մարդկանց ուշքն ու միտքը համեղ ու տեսններն են, խմիչքները, սգո տանը մարդիկ ավելի հավաք են, շատերի մեջ արթնանում է մահվան մասին խորհելը: Ես հուշարկավորությունների ժամանակ միշտ կոչ եմ անում՝ ասելով, որ մենք միայն հանգուցյալի համար չենք աղոթում, այլ նաեւ մեզ համար, որ հիշենք, որ մեզ էլ է մի օր սպասում սա. պատրա՛ստ ենք մենք: Հուղարկավորության գնացող հոգեւորականը պարտավոր է հավիտենական կյանքից խոսել, հարությունից խոսել: Մարդկանց սրտերում մեկ հատիկ սերմ կընկնի եւ Աստծո ողորմությամբ կգործի:

- Տե՛ր հայր, ո՞րն է թեմայի վերաբերյալ Ձեր պատգամը մեր ընթերցողներին:

- Սիրելի՛ ընթերցող, մենք պետք է վախենանք դատաստանից, որը մահվանից հետո է, մենք պետք է վախենանք մեր մեղքերից, ոչ թե մահվանից: Հաճախ կարդացեք Ղուկասի Ավետարանում գետեղված Աղքատ Ղազարոսի եւ մեծահարուստի առակը (տե՛ս Ղուկ. ԺԶ 19-31) եւ նրանց վիճակի մասին մահվանից հետո: Այս ամենի հիմքում հավատն է, հավատն առ այն, որ մեր Տերը պատրաստ է մեզ հավիտենական կյանք, երջանկություն, ուրախություն եւ սեր պարգեւել:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Վիսակոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր.

16.1.2013 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ